Azg

Azg armenian daily

19 ԱՊՐԻԼ 2000 ՇԱԲԱԹ Ի 71 (2039)

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնախնդիրները

ՍՏԱՄԲՈՒԼ, 18 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 18-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընդհանուր ժողովում քննարկվել են 21-րդ դարում Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնախնդիրները: Արտգործնախարար Իսմայիլ Ջեմն իր ելույթում նշել է, որ 21-րդ դարում Անկարայի արտաքին քաղաքականության 2 հիմնարար խնդիրներն են լինելու Եվրասիայի կենտրոնական պետություններից մեկը եւ Եվրամիության լիիրավ անդամ դառնալ: Նա ընդգծել է նաեւ, որ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Թուրքիան լուրջ անելիքներ ունի, ինչն էլ ավելի կընդգծվի չեչենական պատերազմի ավարտից հետո: «Թուրքիան պաշտպանում է տարածքային ամբողջականության սկզբունքը, բայց չենք կարող անտարբեր մնալ քաղաքացիական անձանց, կանանց, երեխաների նկատմամբ իրականացվող բռնությունների նկատմամբ»: Նախարարը ընդգծել է նաեւ Կովկասյան խաղաղության պակտի կարեւորությունը՝ Վրաստանի եւ Ադրբեջանի անվտանգությունը երաշխավորելու համատեքստում, ինչպես նաեւ Բաքու-Ջեյհան նավթատարի կառուցման կարեւորությունը: Նշենք, որ նախագահ Դեմիրելի լիազորությունների ավարտման պայմաններում Իսմայիլ Ջեմը համարվում է նախագահի ամենահավանական թեկնածուներից մեկը: «Ռադիկալ» թերթի տվյալներով, Իսմայիլ Ջեմին որպես նախագահ է ցանկանում տեսնել Թուրքիայի բնակչության շուրջ 40 տոկոսը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ֆրանսիական հարմարվողականության բացերն ու դասերը

Նախագահ ժակ Շիրակը դժգոհ է, վշտացած է թուրքական մամուլից, ընդհանրապես՝ թուրքերից: Էլիզեի պալատում նրա օգնականը Թուրքիայի դեսպանին ասել է. «Նախագահ Շիրակն անձամբ ջանք չի խնայել Սենատում արգելելու Հայոց ցեղասպանության ճանաչումը: Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության գործում նախագահ Շիրակը թուրքի նման (ընդգծումը մերն է– խմբ.) է աշխատել եւ էական դեր է կատարել Հելսինկիում՝ Թուրքիայի անդամակցության հարցում: Եվ այս բոլորից հետո, տեսնելով, որ Անկարան մի հոդվածով Ֆրանսիային դուրս է թողել (ռազմական) ուղղաթիռների գնման գործընթացից, նախագահ Շիրակը խորապես հուզված է, հուսախաբված: Այդ պատճառով նա հեռանգել է իր նախատեսված այցը Թուրքիա, մինչեւ երկու երկրների միջեւ հարաբերությունների կարգավորումը»: «Հյուրիեթի» մարտի 24-ի համարում լույս տեսած (տես՝ «Յառաջ», մարտի 25–26) այս տեղեկությունն էլ զայրացրել է ժակ Շիրակին: Ըստ երեւույթին, խորհրդապահության մեջ մնալու սահմանված այդ խոսքերի հրապարակումը խառնել է նրա բոլոր հաշվարկները, եւ նա իր դժգոհությունն արտահայտել է մարտի 25-ին Լիսաբոնում եվրոպական վեհաժողովի ավարտին տված մամլո ասուլիսում: Ոչ, նա չի հերքել «Հյուրիեթի» գրածը, սակայն ասել է, թե համաձայն չէ իր այցելության հետաձգման մասին թուրքական թերթի բացատրությունների հետ: Պնդելով, թե այնուամենայնիվ «սկզբունքով» Թուրքիա գնալու է, նա ավելացրել է. «Ֆրանսիայի եւ Թուրքիայի հարաբերությունները շատ լավ են եւ կարելի չէ իրար հետ շփոթել պետական այցելությունն ու տնտեսա-ֆինանսական պայմանավորվածությունները»:

Անշուշտ, նախագահ Շիրակը ոչինչ չէր կարող ասել այն մասին, թե կարելի՞ է շփոթել տնտեսա-ֆինանսական պայմանավորվածությունները ցեղասպանված մի ժողովրդի արդար պահանջի՝ պատմական փաստը ընդունելու հետ: Քանի որ, ինչպես իր օգնականն է ասել թուրք դեսպանին, նա «թուրքի նման» աշխատել է հօգուտ Թուրքիայի եւ «ջանք չի խնայել Սենատում արգելելու Հայոց ցեղասպանության ճանաչումը»:

Նույն Սենատում, որը Ֆրանսահայերի ու նրանց բարեկամների պահանջին պատասխանել էր գրեթե այնպես, ինչպես Հայաստանում Ֆրանսիայի դեսպան պրն Միշել Լեգրան՝ Սենատը լիազորված չէ պատմությանը որակումներ տալու:

Նույն Սենատը, որը Հայոց ցեղասպանության բանաձեւը մերժելուց 3 օր հետո, մարտի 26-ին, պատմությանը մի շատ փառավոր եւ արդար որակում էր տվել, խվեարկելով օրենքի մի բանաձեւ, ուր կարդում ենք. «Ֆրանսիայի Հանրապետությունն ընդունում է, որ մարդկության դեմ կատարված ոճիր է սեւամորթների անդրատլանտյան գերեվաճառությունը, նմանապես Հնդկական օվկիանոսում, նաեւ Ամերիկայում, Կարիբյան կղզիներում, 18-րդ դարից սկսյալ Եվրոպայում աֆրիկյան ժողովուրդների, կարմրամորթների, մալկաշների եւ հնդիկների գերեվաճառությունը»:

Այսպիսի բաներ, պրն Շիրակ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Չի՞ բացառվում, որ կդատապարտվեն հոկտեմբերի 27-ի սպանվածները»

ԱԺ-ից եւ նրա ղեկավարությունից դժգոհ է ոչ միայն Ռոբերտ Քոչարյանը, այլեւ «Երկրապահն» ու ՀԺԿ-ն



ԼԱՐԻՍԱ ՉԻԼԲԱՐՅԱՆ

«Անարդարացի կերպով դատարանի կողմից սկսել են ազատ արձակվել հոկտեմբերի 27-ի ոճրագործության համար ձերբակալված կասկածյալները, չի բացառվում, որ բաց կթողնվեն մնացած բոլորը, եւ կդատապարտվեն սպանվածներն ու այդ օրվա պատանդ վերցվածները», երեկ ԱԺ-ում հայտարարությունների ժամին պատգամավոր Ռուբեն Գեւորգյանն (Ծաղիկ Ռուբո) ի վերջո հրապարակեց «Երկրապահի» դիրքորոշումը հոկտեմբերի 27-ի նախաքննության նոր ընթացքի վերաբերյալ, որը խորհրդանշվում է նախագահի խորհրդական Ալեքսան Հարությունյանի խափանման միջոցի փոփոխությամբ: Երբ վերաքննիչ դատարանում քննարկվում էր հոկտեմբերի 27-ի նախաքննության քննչական խմբի բողոքը առաջին ատյանի դատարանի վճռից, այսինքն վիճարկվում էր Ալեքսան Հարությունյանի կալանքից ազատելու դատարանի որոշումը, Ռուբեն Գեւորգյանը մի շարք ԵԿՄ անդամների հետ անձամբ գտնվել է վճռաբեկ դատարանի շենքում: Ռուբեն Գեւորգյանը, ինչպես նաեւ նրա ընկերակիցները՝ Մյասնիկ Մալխասյանը, Հրանտ Գրիգորյանը, Սասուն Միքայելյանը, «Երկրապահի» առաջին դեմքերը չեն, թեեւ Հրանտ Գրիգորյանը Մանվել Գրիգորյանի եղբորորդին է: Փաստորեն կարելի է արձանագրել, որ երեկ ավելի ակնառու դարձավ «Երկրապահի» տրոհումը՝ Մանվել Գրիգորյանից եւ նրա անմիջական շրջանակից զատվեց միջին շերտը, որոնք թեեւ վարչության անդամներ են, սակայն մինչ այսօր վճռորոշ դերակատարում չեն ունեցել: Ռուբեն Գեւորգյանը նաեւ փաստեց, որ իր այս հայտարարությանը համակարծիք են ԵԿՄ տարածքային շատ կազմակերպություններ:

Տես էջ 3

Գնացե՛ք Հայաստան

Լավ է ուշ, քայց ապահով

Ապրիլի 15-ին գերմանական առաջին ARD հեռուստաալիքն իր ավանդական ճանապարհորդական ուղեցույցի մեջ, ի թիվս Ալգարվի (Պորտուգալիա), Սլովակիայի ու Բրյուսելի խորհուրդ էր տալիս Հայաստան էլ գնալ: Մեր երկրի տեսարժան վայրերի մի քանի րոպե ցուցադրումը եվրոպայում ամենաշատը ճամփորդող գերմանացի քանի՞ զբոսաշրջիկի կբերի Հայաստան, դժվար է ասել, բայց որ հոկտեմբերի 27-ից հետո մեր երկրի մայրաքաղաքում այսուայնտեղ արձակվող մահացու գնդակները Հայաստանի քարտեզի վրա դեռ չեն սոսնձել «Գեղեցիկ է, հետաքրքիր, բայց վտանգավոր» վերնագիրը, փաստ է: Հաղորդումն, իհարկե, չէր սահմանափակում ուղեւորի՝ ավիաընկերություն ընտրելու ոչ այնքան լայն հնարավորությունը, երեւի չգիտեր էլ, որ նույն օրն իրենց երեւան թռիչքին սպասող «Հայկական ավիաուղիներ»-ի մի շարք ուղեւորներ Ֆրանկֆուրտի օդանավակայանից բախտ չէին ունենալու ինքնաթիռ բարձրանալ ու տեղ հասնել: Չէ, «բախտ չունեին»-ի տեղ երեւի ավելի ճիշտ է գրել բարեբախտաբար, քանի որ Հայաստանի վարձակալած աերոբուսը անսարք շարժիչի պատճառով երեւանից չի բարձրացել եւ փոխարինվել է ավելի փոքր՝ ՏՈՒ-154-ով, որի հետեւանքով 132 տեղանոց օդանավից դուրս են մնացել նաեւ ԱՄՆ-ից Ֆրանկֆուրտով թռչողները: Նրանք, ինչպես հեռախոսով տեղեկացանք, աղաղակվել են հյուրանոցով, սննդով: Եվ քանի որ ավիաընկերությունը միայն ամռան ամիսներին շաբաթական երկու թռիչք ունի, ստիպված են յոթ օր սպասել:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Ռազմական գործողությունները Չեչնիայում շուտ չեն ավարտվի

ՄՈՍԿՎԱ, 18 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Չեչնիայում դաշնային միացյալ ուժերի հրամանատարի պաշտոնակատար գեներալ-գնդապետ Գենադի Տրոշեւի կարծիքով, ժամանակավրեպ են Չեչնիայում ռազմական գործողությունները ավարտվելու մասին խոսակցությունները: Ըստ «Ինտերֆաքս»-ի, Տրոշեւը զինծառայողներին կոչ է արել չթուլանալ եւ միշտ զգոն լինել: Նա նշել է, թե Չեչնիայում կայունություն կհաստատվի ոչ վաղը:

Մինչդեռ Ռուսաստանի ԱԳ նախարար Իգոր Իվանովն ամերիկյան CNN հեռուստակայանին տված հարցազրույցում ասել է, թե Մոսկվան շփումներ ունի Մասխադովի հետ: Նա նշել է, թե խոշորածավալ ռազմական գործողություններն ավարտված են, եւ սկսվել է կարգավորման քաղաքական փուլը, ինչը արտահայտվում է չեչենական հասարակայնության հետ շփումներով, տեղական իշխանության մարմինների ձեւավորմամբ եւ Պետդումայում Չեչնիայից պատգամավորների ընտրությունների անցկացմամբ:

«Ազատություն» ռադիոկայանի հաղորդմամբ, չեչենական կազմավորումները կատաղի դիմադրություն են ցույց տալիս հանրաքվեի հարավում հատկապես Նոժայ-Յուրտ ու Վեդենո շրջաններում, ուր կենտրոնացված են Բասաեւի, Գիլաեւի ու Խաթաբի ջոկատները: Ըստ ռուսական հրամանատարության, չեչեն մարտիկների թիվը ներկայումս 4 հազար է: Մարտի 17-ից Գրոզնում գրանցում ունեցողները կարող են տուն վերադառնալ: Ուժեղացված է անձնագրային հսկողությունը՝ կանխելու համար չեչեն մարտիկների մուտքը Գրոզնի:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Լոտոների վերջը կարծես թե եկել է

Ավելիս բոլոր թերահավատներին, ԱԺ պատգամավորներին ու հատկապես Արշակ Սադոյանին

ԳԱԲՐԻԵԼ ՅՈՒՔՈՅԱՆ

Ինչպես ծառն են աճնանը հաշվում, այնպես էլ լոտոները մինչեւ աշուն կհաշվեն՝ երեք կամ չորս, կամ միգուցե ավելի հիչ: Ներկայումս գործող լոտոները գտնվում են ծանր ֆինանսական վիճակում (չնայած դրանց թիվը շաբաթեշաբաթ ավելանում է–Գ. Մ.), դրանցից 3-4-ը արդեն սնանկացման եզրին են ու շուտով թերեւս կփակվեն: Լոտոների գործունեությունը վերջապես կկանոնակարգվի կառավարության կողմից այժմ ընդունվող մի օրինագծով, ըստ որի լոտոների նկատմամբ կկիրառվի հաստատագրված վճարների համակարգ: Սա էր ամենակարեւոր տեղեկատվությունը Վիճակախաղային բիզնեսի ասոցիացիայի նախագահ Արմեն Ստեփանյանի երեկվա ասուլիսից, որը ուղղված էր հատկապես լոտոյի հանդեպ բոլոր թերահավատներին, այդ թվում թերեւս նաեւ **«Ազգին»**, որը երեկ տեղեկացնում էր, որ շուտով վերջ է տրվելու հայ իրականության ամենացայտուն երեւույթը եւ ամենահրատապ խնդիրներից մեկը դարձած, բազմաթիվ ու բազմատեսակ լոտոների գործունեությանը ու դրա փոխարեն ստեղծվելու է մեկ ազգային վիճակախաղ:

Դե, խաղ է, էլի, մեկը խաղում է, մյուսը՝ շահում

Ըստ Ա. Ստեփանյանի, լոտոների «շնորհիվ» ստեղծվել է մոտ 20 հազար աշխատատեղ, ինչը նշանակում է՝ այդքան մարդ չի հեռանա երկրից, ասել է թե լոտոները նպաստում են արտագաղթի կասեցմանը (!): Ի դեպ, ասուլիսում բազմիցս հնչեց այն միտքը, որ լոտոն էլ բիզնես է, այստեղ էլ գործում են շուկայական օրենքները, այստեղ էլ կա մրցակցություն, եւ ամբողջը թելադրված է շուկայով. եթե պահանջարկ կա, եթե 2 մլն-անոց Հայաստանում շաբաթական վաճառվում է 2 մլն տոմս, ուրեմն լոտոն պետք է մեր ժողովրդին:

Տես էջ 3

ԱՄՆ պետդեպարտամենտում կորել է հույժ գաղտնի տեղեկությամբ համակարգիչ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 18 ԱՊՐԻԼ, ՏՆԱՐՔ: ԱՄՆ պետդեպարտամենտի բաժիններից մեկում կորել է պետական կարեւորություն ունեցող տեղեկությամբ համակարգիչ: Կորչելու փաստը հաստատել է Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Ջեյմս Ռուբինը: Նրա խոսքերով, դեռեւս հայտնի չէ, թե ինչպես է կորել համակարգիչը: Որոնումները շարունակվում են արդեն երկու ամսից ավելի: Նոութբուքն օգտագործվել է Պետդեպարտամենտի հետաքննությունների եւ հետախուզության վարչության ամենագաղտնի փաստաթղթերի մշակման համար: Համակարգչի հիշողության մեջ պահպանվում է ոչ միայն ամենագաղտնի տեղեկությունը, այլեւ այն կարդալու ծածկագրերը:

ՊՈՒՐԱԿԻՆ

Զեկուցումների թեման մասնավորեցված է Հայոց ցեղասպանությունը: Դարի ամենաողբերգական ու աղմկոտ ոճրագործություններից մեկն առայսօր չի արժանացել համընդհանուր ճանաչման՝ ի տարբերություն հրեական Հոլոքոստի, որն Իսրայել պետության եւ արտերկրի հրեաների ողջ ախտահում ունեցած ազդեցության ու լծակների շնորհիվ ընդունվեց եւ նույնիսկ հնարավորինս փոխհատուցվեց:

Հայերիս լծակներն ավելի սահմանափակ են, միջոցներն՝ ավելի աղքատիկ, սակայն, միեւնույն է, ոչինչ չի կարող մեզանում մոռացության մատնել Հայ դատը՝ սփոփելով հուժարվել անցյալի բեռից: Այսպիսին է հարցի զգացմունքային կողմը, մինչդեռ եթե ցեղասպանության ճանաչման պահանջ ենք բարձրացնում, պիտի հեռանանք զգացմունքներից ու նախ եւ առաջ գիտականորեն հիմնավորենք մեր փաստարկները: Ընդհանուր առմամբ սա էր գիտաժողովի մոտեցումը խնդրո առարկային, որի առնչությամբ հնչած ելույթներն էլ մանրակրկիտ մոտեցումներ էին արտահայտում: «Հայոց ցեղասպանությունը եւ ռուսական մամուլը 1915-17 թթ.», «Հայոց ցեղասպանության հիմնահարցերի լուսաբանումն արաբական պատմագրության մեջ», «Ամերիկահայերը Հայոց ցեղասպանության տարիներին», «Սոցիալ-տնտեսական ինչպիսի բնագավառներում ես մնալը նպաստեց 20-րդ դարի ցեղասպանության գործողություններին» եւ այլն: Թեպետ մոտեցումները խայտաբղետ են, սակայն նպատակը մեկն է՝ հնարավորինս մշակել ճիշտ ռազմավարություն ցեղասպանության ճանաչման ուղղությամբ:

Իսկ այդ ռազմավարությունն առայժմ թերեւս «կաղում» է, այլապես արդյունքներն ավելի ակնառու կլինեին: Հետաքրքրական է, որ գիտաժողովին զեկույցով հանդես է գալու ավստրիահայ արվեստագետ ու արվեստաբան Արտեմ Օհանջանյանը, որը զգալիորեն նպաստել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը վերջերս Ավստրիայի խորհրդարանի օրակարգում ընդգրկելուն:

Ի դեպ, գիտաժողովն էլ իր հերթին բավական ծանրաբեռնված օրակարգ է սահմանել. չնայած զեկույցների համար նախատեսված 20-ական րոպեին՝ մեկ օրվա ընթացքում այնուամենայնիվ դժվար է 10-15 զեկույց ունկնդրելը: Դրանց ընդհանուր թիվը 50-ի է հասնում, իսկ բանավեճի ժամանակ գրեթե չի մնում:

Ինչեւէ, գիտաժողովի առաջին օրվա առավել հետաքրքիր զեկույցների թվում նշենք էդվարդ Հովհաննիսյանի եւ Ստեփան Ստեփանյանի խոսքը՝ «Հայերի ցեղասպանության դատապարտման ռազմավարությունը» եւ «20-րդ դարի առաջին ցեղասպանությունն ու պատմության դասերը» թեմաներով: Ըստ էդվարդ Հովհաննիսյանի՝ մենք այսօր չունենք հզոր լծակներ՝ ցեղասպանությունը ճանաչել տալու: Փոխարենը բավականին միամիտ մոտեցում ենք դրսեւորում մեր ցեղասպանությունը ճանաչած ու չճանաչող երկրների հանդեպ՝ առաջիններին միանշանակորեն որակելով բարեկամ, երկրորդներին՝ թշնամի: Մինչդեռ գոյություն ունի մեկ ընդհանուր դրդապատճառ՝ քաղաքական շահը: «Բնականաբար, ՆԱՏՕ-ի անդամ Ֆրանսիան չպիտի ընդուներ ցեղասպանությունը, իսկ թուրանիզմի հակառակորդ Ռուսաստանը պիտի ընդուներ», եզրակացրեց նա, թեպետ նշենք, որ համեմատությունն ու նման մոտեցումն, այնուամենայնիվ, վիճելի են:

Զեկուցողի կարծիքով՝ մեր ռազմավարության կարեւորագույն «հաղթաթուղթը» պիտի հանդիսանա սփյուռքի գործոնը. 1915-ին գաղթած հազարավոր արեւմտահայերի սերունդները պիտի ախտահիմ ի տես վկայակոչվեն՝ իբրեւ ջարդեր: Վիճակագրությունը փաստում է, որ միայն Հայաստանի բնակչության 30 տոկոսն արեւմտահայ է: Ըստ նրա՝ պետք է կազմել միջազգային մի փաստաթուղթ, որը կպատասխաներ ոչ միայն մարդու իրավունքները, ինչպես ՄԱԿ-ն՝ իր հռչակած օրենքներում, այլեւ ազգերի իրավունքները: Նման մի օրենքի նախագիծ զեկուցողը կազմել է եւ պատրաստվում է լոբբիինգ ծավալել միջազգային ատյաններում՝ փաստաթուղթը հաստատելու:

Միաժամանակ նա զուգահեռներ անցկացրեց այս ուղղությամբ Իսրայելի իրականացրած քաղաքականության հետ՝ հայտարարելով, թե հողային պահանջները ցանկացած պարագայում անհիմն են, եթե պահանջվող տարածքը բնակեցված չէ բնիկ հողատիրոջով: Այդպես վարվեցին հրեաները՝ վերաբնակվելով Իսրայելում եւ այնուհետեւ պատշաճաբար, ՄԱԿ-ի հռչակագրով «սանձելով» այդ տարածքը: Նույն Իսրայելի հետ մեկ այլ զուգահեռով նա առաջարկեց հետեւել հրեաների օրինակին եւ հաստիկ-հաստիկ հավաքել ու մայրանում գրանցել ցեղասպանության զոհերի անունները:

«Անունները եւս փաստեր են, որոնք կարելի է վկայակոչել», ամփոփեց էդվարդ Հովհաննիսյանը:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

«21-րդ դարն առանց ցեղասպանությունների». հայերս գիտակցում ենք այս կոչի արժեքը, իսկ ախտա՞հը...

1915-ի հայոց ցեղասպանության 85-րդ տարելիցի նախաշեմին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում սկսվեց «21-րդ դարն առանց ցեղասպանությունների» նշանաբանով չորսօրյա գիտաժողովը: Ապրիլի 18-21-ն ընթացող այս գիտաժողովի կազմակերպիչներն են ԳԱԱ-ն՝ մասնակցությամբ Հայոց ցեղասպանության թանգարանի, պատմության ինստիտուտի, ինչպես նաեւ Մյունխենի հայկական հարցերի հաստատությունը:

դունվեց եւ նույնիսկ հնարավորինս փոխհատուցվեց:

Հայերիս լծակներն ավելի սահմանափակ են, միջոցներն՝ ավելի աղքատիկ, սակայն, միեւնույն է, ոչինչ չի կարող մեզանում մոռացության մատնել Հայ դատը՝ սփոփելով հուժարվել անցյալի բեռից: Այսպիսին է հարցի զգացմունքային կողմը, մինչդեռ եթե ցեղասպանության ճանաչման պահանջ ենք բարձրացնում, պիտի հեռանանք զգացմունքներից ու նախ եւ առաջ գիտականորեն հիմնավորենք մեր փաստարկները: Ընդհանուր առմամբ սա էր գիտաժողովի մոտեցումը խնդրո առարկային, որի առնչությամբ հնչած ելույթներն էլ մանրակրկիտ մոտեցումներ էին արտահայտում: «Հայոց ցեղասպանությունը եւ ռուսական մամուլը 1915-17 թթ.», «Հայոց ցեղասպանության հիմնահարցերի լուսաբանումն արաբական պատմագրության մեջ», «Ամերիկահայերը Հայոց ցեղասպանության տարիներին», «Սոցիալ-տնտեսական ինչպիսի բնագավառներում ես մնալը նպաստեց 20-րդ դարի ցեղասպանության գործողություններին» եւ այլն: Թեպետ մոտեցումները խայտաբղետ են, սակայն նպատակը մեկն է՝ հնարավորինս մշակել ճիշտ ռազմավարություն ցեղասպանության ճանաչման ուղղությամբ:

Իսկ այդ ռազմավարությունն առայժմ թերեւս «կաղում» է, այլապես արդյունքներն ավելի ակնառու կլինեին: Հետաքրքրական է, որ գիտաժողովին զեկույցով հանդես է գալու ավստրիահայ արվեստագետ ու արվեստաբան Արտեմ Օհանջանյանը, որը զգալիորեն նպաստել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը վերջերս Ավստրիայի խորհրդարանի օրակարգում ընդգրկելուն:

Ի դեպ, գիտաժողովն էլ իր հերթին բավական ծանրաբեռնված օրակարգ է սահմանել. չնայած զեկույցների համար նախատեսված 20-ական րոպեին՝ մեկ օրվա ընթացքում այնուամենայնիվ դժվար է 10-15 զեկույց ունկնդրելը: Դրանց ընդհանուր թիվը 50-ի է հասնում, իսկ բանավեճի ժամանակ գրեթե չի մնում:

Ինչեւէ, գիտաժողովի առաջին օրվա առավել հետաքրքիր զեկույցների թվում նշենք էդվարդ Հովհաննիսյանի եւ Ստեփան Ստեփանյանի խոսքը՝ «Հայերի ցեղասպանության դատապարտման ռազմավարությունը» եւ «20-րդ դարի առաջին ցեղասպանությունն ու պատմության դասերը» թեմաներով: Ըստ էդվարդ Հովհաննիսյանի՝ մենք այսօր չունենք հզոր լծակներ՝ ցեղասպանությունը ճանաչել տալու: Փոխարենը բավականին միամիտ մոտեցում ենք դրսեւորում մեր ցեղասպանությունը ճանաչած ու չճանաչող երկրների հանդեպ՝ առաջիններին միանշանակորեն որակելով բարեկամ, երկրորդներին՝ թշնամի: Մինչդեռ գոյություն ունի մեկ ընդհանուր դրդապատճառ՝ քաղաքական շահը: «Բնականաբար, ՆԱՏՕ-ի անդամ Ֆրանսիան չպիտի ընդուներ ցեղասպանությունը, իսկ թուրանիզմի հակառակորդ Ռուսաստանը պիտի ընդուներ», եզրակացրեց նա, թեպետ նշենք, որ համեմատությունն ու նման մոտեցումն, այնուամենայնիվ, վիճելի են:

Զեկուցողի կարծիքով՝ մեր ռազմավարության կարեւորագույն «հաղթաթուղթը» պիտի հանդիսանա սփյուռքի գործոնը. 1915-ին գաղթած հազարավոր արեւմտահայերի սերունդները պիտի ախտահիմ ի տես վկայակոչվեն՝ իբրեւ ջարդեր: Վիճակագրությունը փաստում է, որ միայն Հայաստանի բնակչության 30 տոկոսն արեւմտահայ է: Ըստ նրա՝ պետք է կազմել միջազգային մի փաստաթուղթ, որը կպատասխաներ ոչ միայն մարդու իրավունքները, ինչպես ՄԱԿ-ն՝ իր հռչակած օրենքներում, այլեւ ազգերի իրավունքները: Նման մի օրենքի նախագիծ զեկուցողը կազմել է եւ պատրաստվում է լոբբիինգ ծավալել միջազգային ատյաններում՝ փաստաթուղթը հաստատելու:

Միաժամանակ նա զուգահեռներ անցկացրեց այս ուղղությամբ Իսրայելի իրականացրած քաղաքականության հետ՝ հայտարարելով, թե հողային պահանջները ցանկացած պարագայում անհիմն են, եթե պահանջվող տարածքը բնակեցված չէ բնիկ հողատիրոջով: Այդպես վարվեցին հրեաները՝ վերաբնակվելով Իսրայելում եւ այնուհետեւ պատշաճաբար, ՄԱԿ-ի հռչակագրով «սանձելով» այդ տարածքը: Նույն Իսրայելի հետ մեկ այլ զուգահեռով նա առաջարկեց հետեւել հրեաների օրինակին եւ հաստիկ-հաստիկ հավաքել ու մայրանում գրանցել ցեղասպանության զոհերի անունները:

«Անունները եւս փաստեր են, որոնք կարելի է վկայակոչել», ամփոփեց էդվարդ Հովհաննիսյանը:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Վահրամ Աղաջանյանը ոչ միայն կազատվի կալանքից, այլեւ կարդարացվի

Այս համոզմունքն ունի լրագրողի դատապաշտպանը

Լրագրող Վահրամ Աղաջանյանի փաստաբան Բենիամին Մինասյանն ապրիլի 18-ին ՍԻՄ-ի գրասենյակում հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ լրագրողներին ներկայացրեց դատաքննության ժամանակ տեղի ունեցածը եւ Վահրամ Աղաջանյանի նկատմամբ գործադրված իրավախախտումները: Դատապաշտպանը վկայեց, որ համաձայն Ստեփանակերտի ՆԳ բաժնի պետի փաստաթղթային ձեւակերպումների, Վահրամ Աղաջանյանին տասնօրյա վարչական կալանքի ենթարկելու պատճառը եղել է լրագրողի դիմադրությունն ցույց տալը ոստիկանին: Վ. Աղաջանյանը հերքել է այդ մեղադրանքը, ասելով, որ իր ետեւից եկած ոստիկանին հետել է կամովին, իրենց միջեւ վեճ չի ծագել, հետեւաբար դիմադրելու առիթ չի եղել: Այսպիսով, մեր կողմից տրված այն ձեւակերպումը, որ Վահրամ Աղաջանյանը մեկ հանցանքի համար երկու անգամ պատժվեց, ԼՂՀ արդարադատության մարմինները վարչական պատիժն արդարացնող իրավաբանական ձեւակերպումը գտել են: Այնուամենայնիվ, այդ ձեւակերպումով իրեն բաժին հասած տասնօրյա կալանքը Վ. Աղաջանյանը կրել է 14 օր: Դատապաշտպանը դատարանին միջնորդել է նախ վերացնել իր պաշտպանյալի խափանման միջոց կալանքը, հետո սկսել դատաքննությունը, որը մերժվել է:

Դատապաշտպանը տեղեկացրեց, որ Վահրամ Աղաջանյանի դեմ քրեական գործ հարուցվել է դեռեւս փետրվար ամսին, երբ «10-րդ նահանգ» շաբաթաթերթը տպագրել է «Վերաբնակիչների համար բյուջեում փող չկա» հոդվածը: Նախաքննական մարմինը նրան մեղադրանք է առաջադրել երկու դրվագով՝ հովսաբենցիների հետ կապված, ուր դատապաշտպանի կարծիքով՝ լրագրողի քննադատությունն առավել շեշտադրված է եղել, սակայն քննիչն այս դրվագում մեղադրանքը կարճել է: Երկրորդ դրվագով՝ վանաձորցիներին վերաբերող մասով քննությունը շարունակվել է, եւ գործն ուղարկվել է դատարան: Փաստաբանը գտնում է, որ նախաքննությունը թերի է կատարվել՝ քննիչն անձամբ չի հարցաքննել հոդվածում վկայակոչված վանաձորցիներին, որպեսզի պարզի իսկությունը՝ ԼՂՀ վարչապետը նրանց հանդիպե՞լ է, թե՞ ոչ: Լոռու մարզպետին, Վանաձորի քաղաքապետին ու այլոց ուղղված հարցումներով եզրակացրել է, որ Արցախում վերաբնակվելու ցանկություն ունեցող վանաձորցիներ չկան, հետեւաբար Անուշավան Դանիելյանը նրանց հետ չէր կարող հանդիպել: Դատարանը մերժել է փաստաբանի՝ վկաներին հարցաքննելու միջնորդությունները՝ վանաձորցիներին, ՀՀ կառավարությանն առընթեր հատուկ ծրագրերի եւ վերաբնակեցման վարչության պետ Նելլի Ոսկանյանին, որն անուղղակիորեն «երկրապահ» թերթում հաստատել է՝ իր մոտ հավաքման են գտնվում Արցախում վերաբնակվելու ցանկություն հայտնած 31 վանաձորցիներ: Մերժել է դատարանում հարցաքննել նաեւ ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանին: Վահրամ Աղաջանյանն իրեն մասնակիորեն մեղավոր է ճանաչել, գտնելով, որ պարտավոր էր իմանալու անծանոթի ով լինելը, որը հեռախոսազանգով տեղեկացրել է ԼՂՀ վարչապետին վերագրվող հայտնի նախադասության մասին:

Դատապաշտպանը Վահրամ Աղաջանյանին խուզած գլխով եւ ձեռնաշղթաներով դատարանը բերելը որակեց

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ

լրագրողի դեմ գործադրված բռնություն եւ հալածանք, որոնք նպատակ են ունեցել սնորացնելու եւ վարկաբեկելու լրագրողին: Թեպետ դատարանը մերժել է դատապաշտպանի բոլոր, այդ թվում նաեւ գործը նախաքննություն վերադարձնելու միջնորդությունները, այնուամենայնիվ, պրն Մինասյանը համոզված է, որ հաջողության կհասնեն՝ Վ. Աղաջանյանին կազատեն կալանքից եւ դատարանով կարդարացնեն: Արդեն հայտնի է, որ Վահրամ Աղաջանյանի ու նրա դատապաշտպանի բողոքների հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանն առաջիկա օրերին նոր դատաքննություն կանցկացնի: Դատապաշտպանը հուսով է, որ արդարացվելուց հետո իրենք կպահանջեն պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր առնվազն 4 օր աղօրինի կալանքի են ենթարկել լրագրողին:

Ս. Պ.

Ի պատշաճություն ձերբակալված Վարդան Թաշչյանի

Արդեն մի քանի օր լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում է հայտնվել Արցախում ձերբակալված եւս մի լրագրող՝ Վարդան Թաշչյանը: Մի շարք լրատվամիջոցներ՝ «Իրավունքը», «Երկիրը», «Ա1+»-ը, «Հայոց աշխարհը», «Գոլոս Արմենիին», սնորագրել են՝ ի պաշտպանություն Թաշչյանի տարածված հայտարարության՝ ներքո: Հայտարարության տեքստում նշված է, որ Վարդան Թաշչյանը («Ազատամարտի», «Հայլուրի» երբեմնի աշխատակիցը, այժմ՝ «10-րդ նահանգ» թերթի թղթակից) ձերբակալվել է մարտի 22-ին Արկադի Ղուկասյանի դեմ կատարված մահափորձի կապակցությամբ: Նշված է նաեւ, որ լրագրողին առաջադրված մեղադրանքն առ այսօր չի հրապարակվել. «Նպատակ չունենալով խոչընդոտել նախաքննական մարմնին օբյեկտիվ քննություն իրականացնելու եւ կատարված ոճրագործության, իրական հեղինակներին հայտնաբերելու գործում, այնուամենայնիվ համոզված ենք, որ Վ. Թաշչյանը չէր կարող որեւէ առնչություն ունենալ վերոհիշյալ հանցագործությանը», ասվում է հայտարարությունում:

Թաշչյանի աջակիցները վստահ են, որ նրա ձերբակալությունը սխալմունք է, եւ կոչ են անում ԼՂՀ նախագահին, հանրապետության իշխանություններին ու գլխավոր դատախազին՝ լրագրող Վարդան Թաշչյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխարինել քաղաքից չբացակայելու մասին սնորագրությամբ: Հայտարարության հեղինակները մասնավորապես նշել են, թե խուսափել են կոչին քաղաքական ուղղվածություն հաղորդելուց՝ բավարարվելով գործընկերոջը ցուցաբերած աջակցությամբ:

Ա. Բ.

Վկայագրեր բնակարաններ գնելու համար

Երկրաշարժի գոտում բնակարանների ձեռք բերման հետ կապված ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից իրականացվող նոր ծրագրերի մանրամասները ներկայացվեցին նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Հայաստանում ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմոնի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանյան տնօրեն Դայան Ցիցոսի, գործակալության ժողովրդավարական եւ սոցիալական բարեփոխումների գրասենյակի տնօրեն Քիմ Դիլենի, Հայաստանում ԱՄՆ դեսպանության այլ պաշտոնյաների հետ երեկ կայացած հանդիպման ժամանակ:

Հանգամանորեն ներկայացնելով ծրագիրը, Դայան Ցիցոսն ասաց, որ այն փորձնական է եւ հաջողության դեպքում անպայման շարունակություն կունենա: Իսկ ծրագրի էությունը հետեւյալն է. բնակարանների կարիք ունեցողներին տրվում են բնակարանային վկայագրեր, որոնց միջոցով նրանք կարող են տուկայական գներով ձեռք բերել բնակարաններ: Առաջին այդպիսի բնակարանային վկայագրերը կհանձնվեն արդեն հաջորդ շաբաթ Գյումրիում: Տիկին Ցիցոսի խոսքերով, ծրագրի ամենակարեւոր առանձնահատկություններից մեկն այն է, որ երբ ընտանիքն ապահովվում է բնակարանով, նախկինում զբաղեցրած տնակն անմիջապես ոչնչացվում է: Նա նաեւ տեղեկացրեց, որ այս ծրագրի ավարտից հետո ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը մտադիր է իրականացնել եւս 15 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ նախագիծ: «Եթե փորձնական ծրագիրն իրեն արդարացնի եւ արդյունքները գոհացուցիչ լինեն, ապա մենք կշահագրգռենք ոչ միայն ԱՄՆ կառավարությանն, այլեւ այլ դոնոր երկրներին՝ նոր ներդրումներ կատարել ծրագրի զարգացման ուղղությամբ», ընդգծեց գործակալության հայաստանյան պատասխանատուն:

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ

Ռոբերտ Քոչարյանը վստահություն հայտնեց, որ ծրագիրը հաջողություն կունենա եւ կարեւորեց գործընթացը սկսելը: «Անկասկած, ընտրված է ամենաճիշտ, արդյունավետ եւ գործնական ճանապարհը, որի հիմքում ընկած է «աբս պարզ տրամաբանություն», «եթե օգտագործել եւ փորձ ներդրումներով ավելի շատ մարդկանց խնդիրներ լուծել: Նա նաեւ նշեց, որ եթե այս փորձը հաջողվի, ապա հաջորդ տարվա պետական բյուջեում կառավարությունը նույն նպատակի համար որոշակի միջոցներ կնախատեսի: Ռոբերտ Քոչարյանը միեւնույն ժամանակ պատրաստակամություն հայտնեց ըստ ամենայնի աջակցել ծրագրի արդյունավետ իրականացմանը:

ՀՀ նախագահի վարչության գրասենյակ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յողուածը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձուում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Չի՞ բացառվում, որ կդատապարտվեն հոկտեմբերի 27-ի սպանվածները»

Սկիզբը էջ 1

Նա ընդգծեց, որ ԱԺ-ն, նախանձախնդիր չէ հոկտեմբերի 27-ի հանցագործության բացահայտման գործում եւ ուղղակի մեղադրեց ԱԺ ղեկավարությանը՝ ի դեմս խոսնակ Արմեն Խաչատրյանի. «Հոկտեմբերի 27-ին այս դահլիճում կատարված ոճրագործության բացահայտման պահանջատերը միայն «Երկրապահը» չէ, որն ինչ-ինչ հանգամանքներում հաճախ գործի բացահայտման հետ կապված դառնում է քաղաքական ուժերի թիրախ: Դրա հիմնական պահանջատերն ԱԺ-ն է՝ ձեր գլխավորությամբ, որն ԱԺ նախագահ, չէ՞ որ ոճիրը քաղաքական էր»: Պատգամավորն ըստ ամենայնի խստացրեց «Երկրապահի» ողջ դժգոհությունը՝ իրենց օգնությամբ խորհրդարանում համամասնական ընտրական պատգամավորական մանդատ ստացած «Միասնության» նորընծա գործիչներին՝ առաջին անգամ հնչեցնելով այն միտքը, որ «Երկրապահը» ծառայեցնում են իբրեւ ասպիճան, որով բարձրանում են իշխանության վերնաշերտ եւ ապա մոռանում. «Արյունոտ աթոռների վրա ել նստած եւ պարտավոր ել այդ արյան արժանապատվության համար պայքարել, լինել սկզբունքային եւ հետեւողական այս գործի նկատմամբ»: Դատարանի վճիռը բողոքարկելու իրավունք իշխանության որեւէ մարմին կամ հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ անշուշտ չունի, բայց որոշ ճշմարտություն այս հայտարարության մեջ կա. ԱԺ-ն բավական անտարբեր դիրքորոշում է որդեգրել եւ չի նախաձեռնում անգամ լսումներ, որ թույլ կտային պարզաբանել հոկտեմբերի 27-ի նախաձեռնությունը վարող ճնշական խմբի աշխատանքի, արդյունավետությունը. «Եթե որոշները մտածում են, որ մենք երկրապահներս, ասպիճան ենք, որպեսզի մեր վրայով վեր բարձրանան, ուրեմն եթե փորձ ել արել, ապա անցել մեր վրայով, բայց ոչ թե նստել մեր վրա: Այս խուլ ու նենգ ժամանակներում խորհրդարանի նման դիրքորոշումը վտանգավոր է մեր ժողովրդի համար: Այո՛, քաղաքական կյանքի համար, թերեւս, շատերը պատրաստ չեն: ԱԺ-ն եւ ընդհանուր առմամբ կառավարման բոլոր ոլորտները պետք է ղեկավարեն վերազտնված մարդիկ»:

Վայ ղեկավարներից փրկվելու հույսը միայն Ռուսաստան-Բելառուս միությո՞ւնն է

ՀԺԿ քաղաքական քարտուղար, պատգամավոր Հմայակ Հովհաննիսյանն իր դժգոհությունն ԱԺ ղեկավարությունից հրապարակեց այլ դիտանկյունից՝ արտաքին քաղաքականության: ՌԴ նախագահական վերջին ընտրություններին Հայաստանը գրեթե միակ պետությունն էր, որ դիտորդական առաքելության իր պատվիրակությունը չգործուղեց Մոսկվա՝ պատճառաբանելով բյուջետային միջոցների սղությունը: Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Հմայակ Հովհաննիսյանը բոլորի ուշադրությունը սեւեռեց այս փաստի քաղաքական հետեւանքների վրա. «ԱԺ ղեկավարության չկամությունը դիտորդական առաքելությանը միանալու հարցում կարող է մեկնաբանվել որպես Ռուսաստանում Վ. Պուտինի քաղաքական հակառակորդների հետ համագործակցության արգելք՝ դարչնագույն ուժերի շահերով թելադրված քայլ: Լինելով «Միասնություն» դաշինքի եւ ՀԺԿ անդամ ես պարտավոր եմ հեռու մնալ նման մեկնաբանություններից»: Սակայն Հմայակ Հովհաննիսյանը, որը անցած շաբաթ քաղաքականապես հիմնավորեց «Միասնություն» դաշինքի տրոհման հեռանկարը, այրում է կամուրջները. «Այս դառն իրողությունը ԱԺ-ի ֆինանսական վիճակով արդարացնելու փորձերը զավեշտական են: Եթե ԱԺ բյուջեի հաշվին հնարավոր է գնել 270 հազար դոլար արժողությամբ մեքենա, եթե հնարավոր է ֆինանսավորել բազում գործուղումներ հեռավոր արտասահման, ապա այն չնչին միջոցները, որոնք անհրաժեշտ էին ՌԴ նախագահական ընտրություններին ԱԺ դիտորդական խմբի համար, ցանկության դեպքում կարելի էր գտնել»: Հմայակ Հովհաննիսյանի եզրակացությունը օշինդրի պես դառն էր, բայց մտածելու տեղիք տվող: «Եթե նույնիսկ նման հարցերում ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն չունեն, ինչո՞ւ ենք մեղադրում Աղասի Արշակյանին թափլանդներում եւ ավստրալիաներում մեր շրջագայելու անկախությունը ՌԴ-Բելառուս միության զսպաբամիկով սահմանափակելու փորձերի համար: Մի՞թե 1 մլն ստորագրությունները լավագույն աղացույցը չեն այն բանի, որ մեր ժողովուրդը ընտրյալների դուրս ու ներս անելու, ինչպես նաեւ փողոցներում աջ ու ձախ կրակելու անկախությունից վաղուց զրկվել է եւ վայ ղեկավարներից փրկվելու հույսը կապում է նոր միության ձեւավորման հետ»: Մինչ Հ. Հովհաննիսյանը լռեցնող զանգի համառ ինչյուններին ներքո փորձում էր ավարտել իր միտքը, Աղասի Արշակյանը խրոխտ քայլերով մոտեցավ խորհրդարանական ամբիոնին եւ փաստեց՝ Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցելու նախաձեռնող խումբը համալրվել է եւս 11 հոգով: Արդեն այս բավիղով առաջ է ընթանում 38 պատգամավոր: Իսկ ՀՀԿ Երեւանի քաղկոմի քարտուղար Յուրա Մանուկյանը կոչ արեց ժողովրդին ապրիլի 21-ին ելնել համազգային հանրահավաքի՝ «անձամբ նպաստելու այս միությանը Հայաստանի անդամակցությանը, որովհետեւ Հայաստանի իրական անկախության ապահովման ուրիշ ելք ու միջոց չկա»: Ցավով արձանագրենք, որ ոչ միայն արտագաղթի մղումով համակված մեր հասարակությունը, այլեւ քաղաքական ուժերը Հայաստանի համար այլ ընտրություն չեն տեսնում, քան նոր միություններում ապաստանելը:

Չփորձենք մեր անկարողությունը բարդել ուրիշների վրա

Պատգամավոր Արշակ Սադոյանը խնդիրը մասնավորեցրեց գարնանացանի այս եռուն օրերում ոռոգման ջրի սակագնի բարձրացման հարցով, այն պարագայում, երբ Ռոբերտ Քոչարյանն իր նախընտրական ծրագրում, ինչպես նաեւ «Միասնությունն» իր նախընտրական խոսքերում հավաստել էր, որ այդ սակագինը չի բարձրանալու: ԱԺ-ն երեկ փորձեց պաշտպանել փոքր ու միջին օբյեկտների սեփականատերերի խավին՝ սեփականության իրավունքի համար տարաժամկետ վճարումների եւ զեղչերի նոր սանդղակ սահմանելու նախագծով: Բայց ոչ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի առաջարկությունը, որի հիմքում զեղչերի գաղափարն է, ոչ էլ պետական ունեցվածքի կառավարման նախարարի՝ Դավիթ Վարդանյանի նախաձեռնությունը 20 տարով սեփականության իրավունքի վճարումները հետաձգելու վերաբերյալ, ընդհանուր հայտարարի չեկան: Հայաստանում նոր սեփականատերերի դասի ձեւավորումը, որ սկսվեց 91-ից, այդպես էլ չի ավարտվում, ընդհակառակը՝ սկսվել է սեփականատերերին կորցնելու ժամանակը:

Լոռների վերջը կարծես թե եկել է

Սկիզբը էջ 1

Ինչ վերաբերում է խաբեություններին կամ լոռների շուրջ պտտվող տարաբնույթ լուրերին, ապա պետք է ընդունել՝ մի պարզ ճշմարտություն՝ ով խաղում է, նա շահում է, իսկ որ չեն շահում, ամենեւին էլ լոռների կազմակերպիչների մեղքը չէ, ինչպես նաեւ երեկվա ասուլիսում ներկա լոռվարների՝ Հրանտ Թոխատյանի («TV լոռ»), Ալոս Ղազարյանի («Հայի բախտ») եւ Վարդեն Թադեւոսյանի («Խոշոր շահում»): Ի դեպ, դերասանների ներկայությունն ու նրանց հատուկ հումորը մի կողմից եւ լրագրողների ավելի շատ ելույթ հիշեցնող հարձակողական բնույթի հարցերը մյուս կողմից յուրօրինակ միջոցառման վերածեցին ասուլիսը: Ալոս Ղազարյանն, օրինակ, փորձում էր ամեն կերպ լրագրողներին համոզել, որ լոռն լավ բան է: «Ես, որպես արվեստագետ, շատ գոհ եմ լոռներից, որն ինձ հնարավորություն է տալիս ոչ միայն մեր գործը առաջ տանել, նաեւ՝ մեր ընկերներին օգնել», ասաց հայտնի շոումենը: Լոռն վարելու իր դերից դժգոհ չէ նաեւ Հ. Թոխատյանը, որը, ինչպես նաեւ լոռների բարեգործությունից օգտվող այլ արվեստագետներ, փորձում է այդ գումարներով իրագործել իր ստեղծագործական ծրագրերը: Կարճ ասած՝ լոռները թույլ են տալիս ֆիլմեր նկարել, երաժշտություն ձայնագրել ու նկարներ նկարել: Ինչ վերաբերում է ժողովրդին, ապա լոռների կազմակերպիչներն ու դրան առնչվող արվեստագետները կարծում են, որ «լոռները մարդկանց մեջ հույս ու հավաս են արթնացրել»:

«Ասք լոռոյի մասին» շարքից

Ի տարբերություն ասոցիացիայի նախագահ Ա. Ստեփանյանի, դերասանների կարծիքով լոռն ավելի շուտ բարեգործություն է, քան թե բիզնես: Ավելին, լոռն խաղալու հնարավորությունն ինքնին բարեգործություն է հայ ժողովրդի համար, հատկապես գյուղական բնակչության, որը, Հ. Թոխատյանի վկայությամբ, ահավոր վիճակում է: Որպես ապացույց, «ասք լոռոյի մասին» շարքից բերվեց մի օրինակ. Հայաստանի հեռավոր շրջաններից մեկի մի հեռավոր գյուղում կա ընդամենը մի զույգ կոշիկ, էդ մի զույգ կոշիկը հագած ամեն օր գյուղից մեկը գնում է քաղաք, որ լոռն առնի, գյուղացիները խաղան ու ապրեն, որովհետեւ ուրիշ ապրուստի միջոց չունեն: **«Ազգի»** հարցին, թե ո՞ր գյուղն է դա ու քանի՞ մարդ է շահել այդ գյուղում, որն Թոխատյանը պատասխանեց հումորով. դա Ղափանի շրջանի Գյոդագլու (Վարդեվանք) գյուղն է, որն ունի ընդամենը 64 բնակիչ ու 8 աշակերտ, որտեղ «խոզերը մարդկանցից ավելի շատ են, բայց չեն վաճառվում ու ժողովուրդը լիքը խոզի միս ունի, բայց հաց չունի»: «TV լոռոյի» հաղորդավարի կարծիքով, չի կարելի ասել, թե լոռն խաբում է, քանի որ ինքն անձամբ է հաստատում. գոնե այն ժամանակամիջոցում, երբ վարում է հաղորդումը, ամեն ինչ արդար է ընթանում: «Դե խաղ է, էլի, մեկը խաղում է, մեկը՝ շահում», հավելեց Ալոս Ղազարյանը՝ լրագրողներին հորդորելով ավելորդ աղմուկ չբարձրացնել ու չհիասթափեցնել առանց այն էլ հիասթափված ժողովրդին, թե չէ՝ «էնքան կանեմ, որ էս երկրում կմնաք դուք, մեկ էլ՝ պատգամավորները»:

Լոռների իրական տերերի, կազմակերպիչների, շահույթների մասին՝ մանրամասն

Հոետորական հարցադրումներից ու գնահատականներից, փոխադարձ վիճաբանությունից հետո մնում էր պարզել, որ եթե լոռն ոչ շահութաբեր բիզնես է, ապա ինչո՞ւ է շարունակում աճել նրանց թիվը, եթե լոռները սնանկացման եզրին են կամ հազիվ են պաշտպանում գոյությունը, ինչպե՞ս են շարունակում գոյատեւել, ինչքա՞ն հարկեր են կազմակերպիչները մուծել եւ այլն: Ա. Ստեփանյանը փորձեց բացատրել. թիվը աճում է, քանի որ լոռ բացելու համար պահանջվում է 15-20 հազար դոլար ընդամենը եւ շատերը ինքնաշխատանքով թելադրված քայլ: Լինելով «Միասնություն» դաշինքի եւ ՀԺԿ անդամ ես պարտավոր եմ հեռու մնալ նման մեկնաբանություններից»: Սակայն Հմայակ Հովհաննիսյանը, որը անցած շաբաթ քաղաքականապես հիմնավորեց «Միասնություն» դաշինքի տրոհման հեռանկարը, այրում է կամուրջները. «Այս դառն իրողությունը ԱԺ-ի ֆինանսական վիճակով արդարացնելու փորձերը զավեշտական են: Եթե ԱԺ բյուջեի հաշվին հնարավոր է գնել 270 հազար դոլար արժողությամբ մեքենա, եթե հնարավոր է ֆինանսավորել բազում գործուղումներ հեռավոր արտասահման, ապա այն չնչին միջոցները, որոնք անհրաժեշտ էին ՌԴ նախագահական ընտրություններին ԱԺ դիտորդական խմբի համար, ցանկության դեպքում կարելի էր գտնել»: Հմայակ Հովհաննիսյանի եզրակացությունը օշինդրի պես դառն էր, բայց մտածելու տեղիք տվող: «Եթե նույնիսկ նման հարցերում ճիշտ կողմնորոշվելու ընդունակություն չունեն, ինչո՞ւ ենք մեղադրում Աղասի Արշակյանին թափլանդներում եւ ավստրալիաներում մեր շրջագայելու անկախությունը ՌԴ-Բելառուս միության զսպաբամիկով սահմանափակելու փորձերի համար: Մի՞թե 1 մլն ստորագրությունները լավագույն աղացույցը չեն այն բանի, որ մեր ժողովուրդը ընտրյալների դուրս ու ներս անելու, ինչպես նաեւ փողոցներում աջ ու ձախ կրակելու անկախությունից վաղուց զրկվել է եւ վայ ղեկավարներից փրկվելու հույսը կապում է նոր միության ձեւավորման հետ»: Մինչ Հ. Հովհաննիսյանը լռեցնող զանգի համառ ինչյուններին ներքո փորձում էր ավարտել իր միտքը, Աղասի Արշակյանը խրոխտ քայլերով մոտեցավ խորհրդարանական ամբիոնին եւ փաստեց՝ Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցելու նախաձեռնող խումբը համալրվել է եւս 11 հոգով: Արդեն այս բավիղով առաջ է ընթանում 38 պատգամավոր: Իսկ ՀՀԿ Երեւանի քաղկոմի քարտուղար Յուրա Մանուկյանը կոչ արեց ժողովրդին ապրիլի 21-ին ելնել համազգային հանրահավաքի՝ «անձամբ նպաստելու այս միությանը Հայաստանի անդամակցությանը, որովհետեւ Հայաստանի իրական անկախության ապահովման ուրիշ ելք ու միջոց չկա»: Ցավով արձանագրենք, որ ոչ միայն արտագաղթի մղումով համակված մեր հասարակությունը, այլեւ քաղաքական ուժերը Հայաստանի համար այլ ընտրություն չեն տեսնում, քան նոր միություններում ապաստանելը:

Չփորձենք մեր անկարողությունը բարդել ուրիշների վրա

Պատգամավոր Արշակ Սադոյանը խնդիրը մասնավորեցրեց գարնանացանի այս եռուն օրերում ոռոգման ջրի սակագնի բարձրացման հարցով, այն պարագայում, երբ Ռոբերտ Քոչարյանն իր նախընտրական ծրագրում, ինչպես նաեւ «Միասնությունն» իր նախընտրական խոսքերում հավաստել էր, որ այդ սակագինը չի բարձրանալու: ԱԺ-ն երեկ փորձեց պաշտպանել փոքր ու միջին օբյեկտների սեփականատերերի խավին՝ սեփականության իրավունքի համար տարաժամկետ վճարումների եւ զեղչերի նոր սանդղակ սահմանելու նախագծով: Բայց ոչ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի առաջարկությունը, որի հիմքում զեղչերի գաղափարն է, ոչ էլ պետական ունեցվածքի կառավարման նախարարի՝ Դավիթ Վարդանյանի նախաձեռնությունը 20 տարով սեփականության իրավունքի վճարումները հետաձգելու վերաբերյալ, ընդհանուր հայտարարի չեկան: Հայաստանում նոր սեփականատերերի դասի ձեւավորումը, որ սկսվեց 91-ից, այդպես էլ չի ավարտվում, ընդհակառակը՝ սկսվել է սեփականատերերին կորցնելու ժամանակը:



«Ազգը» խնդրեց հստակեցնել՝ ճի՞շտ են արդյոք այն տեղեկությունները, թե լոռների «ետեւում» կանգնած են նախկին ու ներկա հայտնի քաղաքական գործիչներ, եւ եթե ոչ, ապա ովքե՞ր են դրանց իրական տերերը: Դրանք, ըստ պրն Ստեփանյանի, հիմնականում 20-25 տարեկան երիտասարդ բիզնեսմեններ են, որոնք փորձում են իրենց բախտը այս բիզնեսում: Հետո, արդեն ասուլիսից հետո, **«Ազգի»** հետ զրույցում Ա. Ստեփանյանը մանրամասնեց, որ լոռների տերերը, ինչպեսեւ ինքը (Ա. Ստեփանյանը «Խոշոր շահում»-ի կազմակերպիչ «Տիտան» ՍՊԸ նախագահն է, նկարիչ) «արվեստագիտական շրջանակներից են», որոնց «ուղեղն աշխատում է ու կարողանում են շուտ կողմնորոշվել»: Ինչ վերաբերում է լոռների ծագման հետ «մաֆիոզների» անուններ կապելուն, ապա այդ մաֆիոզները «ի վիճակի չեն ստեղծարար աշխատանքով զբաղվելու», վիճակախաղերի նախագահի կարծիքով, նրանք ի վիճակի են միայն հարձակվելու եւ ուտելու ուրիշների ստեղծածը:

Ե՞րբ կլինի լոռն վերջին

Ա. Ստեփանյանը տեղեկացրեց, որ կառավարությունում գրեթե պատրաստ է վիճակախաղերի մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծը, եւ օրերս կսկսվեն ԱԺ քննարկումները: Նոր օրենքով յուրաքանչյուր մեկ լոռոյի տոմսի համար սահմանվելու է մոտ 18 տոկոս հաստատագրված վճար, ինչը, ըստ պրն Ստեփանյանի, բավականին բարձր է եւ, վիճակախաղերով զբաղվելը այդ դեպքում կարող է դառնալ վերջնականապես անշահաբերական: Ա. Ստեփանյանի կարծիքով՝ ամենահրատապականը 12 տոկոս հաստատագրված վճարն է, որի դեպքում թերեւս կմնան մեկ-երկու վիճակախաղեր, «եթե, իհարկե, վերոհիշյալ օրենսդրական նախաձեռնության նպատակը դատը կանոնակարգելն է, այլ ոչ թե վիճակախաղերի բիզնեսը մեռցնելն ու լոռները վերջնականապես փակելը»:

ԱԶԳ

Տնտեսություն

«Գյուղփոխբանկը» առավել ռիսկով վարկեր տալիս է գյուղացիներին

«Նրանք ամենաազնիվ վարկառուներն են», հավատացնում է բանկի նախագահը

Հայաստանում գոյություն ունեցող մի քանի վարկային ծրագրերը, որոնք իրականացվում են տարբեր միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների կողմից, շատ են քննադատվում: Տնտեսվարողների ընդմամբ վարկերն իրենց համար անհասանելի են դարձել հատկապես բանկերի կողմից ներկայացվող պայմանների, բյուրոկրատական քաշքշուկի, բարձր տոկոսադրույքների եւ այլ պատճառներով: Բանկիրներն էլ իրենց հերթին են բողոքում: Ըստ նրանց, Հայաստանում վարկ տալը դեռեւս մեծ ռիսկերի հետ է կապված, չկան վերադարձի իրական երաշխիքներ: Այս առումով Գյուղացիական փոխօգնության բանկի նախագահ Ստեփան Գիշյանը շատ ավելի լավատես է: «Գյուղփոխբանկն» այսօր ամենաշատ հաճախորդ ունեցող բանկն է, պատճառը, ըստ պրն Գիշյանի, բանկի «սպեցիֆիկությունն» է: Նախ, միակ կոմերցիոն բանկն է, երկրորդ՝ աշխատում է այնպիսի ոլորտում, որտեղ շատ քիչ բանկեր են մուտք գործում՝ գյուղատնտեսությունում, եւ երրորդ պատճառը, ըստ բանկի նախագահի, հենց հաճախորդներն են գյուղացիները: «Մեր հաճախորդներն ամենաազնիվ խավն են, որի հետ եթե ազնիվ ես վերաբերվում, նա էլ քեզ հետ է նման ձեւով վերաբերվում», ասաց նա: Ներկայումս բանկն ունի մոտ 15 հազար անդամ գյուղացիական տնտեսություններ Հայաստանի մոտ 320 գյուղերում՝ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Լոռու ու Վայոց ձորի, առավել մեծ ներուժ ունեցող գյուղատնտեսական շրջաններում, որոնք կազմում են Հայաստանի գյուղական բնակավայրերի 40 տոկոսը եւ տալիս են գյուղատնտեսական արտադրանքի մոտ 60-70 տոկոսը:

Կանխիկ գումարը զարնանացանի «պիկ» սեզոնին փրկություն է գյուղացու համար

Բանկի եւ գյուղացիների հետաքրքրությունները փոխադարձ են: Գարունը գյուղատնտեսական աշխատանքների «պիկ» շրջանն է, եւ ֆինանսական ու շրջանառու միջոցներից զրկված գյուղացիական տնտեսությունների գերակշիռ մասի համար կանխիկ փողը, որը տրվում է որպես վարկ, ուղղակի փրկություն է: Ավելին, ինչպես հավաստեցին Արմավիրի մարզի մի քանի համայնքներում (անունները չենք նշում իրենց խնդրանքով), այդ վարկերի գումարով ոչ միայն ձեռք են բերում գարնանացանի համար անհրաժեշտ սերմացու, վառելանյութ, պարարտանյութ, բուժանյութ եւ այլն, այլեւ շատերը հոգում են իրենց կենցաղային-սոցիալական խնդիրները, ասենք, վարկի մի մասով հաց են գնում, պարտք վերադարձնում կամ... մուծում երեխաների ուսման վարձը: «Որքանո՞վ է ընդունելի դա» հարցին պրն Գիշյանն, ի դեպ, բավականին նորմալ է վերաբերվում: Ըստ նրա, այդ երեւույթին այնքան էլ հիվանդագին չպետք է նայել, քանի որ իրենց համար, ի վերջո, կարեւորը վարկի վերադարձնելիությունն է, ինչն այսօրվա դրությամբ կազմում է 98-99 տոկոս: Անցյալ տարի, օրինակ, բանկը տրամադրել է մոտ 5 մլն դոլարի վարկեր ավելի քան 7000 տնտեսությունների, եւ դրանք գրեթե բոլորն էլ վերադարձվել են: Բանկն, իհարկե, նախանձախնդիր է վարկերի օգտագործման հարցում եւ պարբերաբար վերահսկում է, որ վարկառուի բիզնես-ծրագիրը կատարվի: Այսպիսի օրինակ: Ենթադրենք գյուղացուն տրամադրվել է 1000 դոլար, որի համար որոշակի տարածքի վրա ինչ-որ մշակաբույս պետք է աճեցնի: Բանկի համար կարեւորն այն է, որ բույսն իսկապես աճեցվի ու վարկը ճիշտ ժամանակին վերադարձվի:

Հարբեցող ու ծույլ գյուղացիների առջեւ վարկի ճանապարհը փակ է

Ըստ Ս. Գիշյանի, շատ հիշ դեպքերում են վարկերը ուղղվում (դժբախտ պատահար, աղետ եւ այլն): Ընդհանրապես բանկը վարկ է տրամադրում ունեցվածք (մեքենա, անասուն եւ այլն) ունեցողներին, բանկային «լեզվով» ակտիվների առկայության դեպքում, անկախ նրանց շուկայական արժեքից: Շատ կարեւոր է նաեւ համայնքի՝ կոլեկտիվի երաշխիքը (բանկի անդամները գյուղացիական միություններն ու նրանց մեջ մտնող համայնքներն են): «Հարբեցողը, թմրամոլը, ծույլը սպառած փողը գյուղատնտեսության մեջ չի ներդնի», հետեւաբար նրանց առջեւ վարկի ճանապարհը մեկընդմիշտ փակ է: Ի դեպ, երբեմն համայնքի անդամներն իրենք են հավանություն տալիս, դեռ սպասում են, որովհետեւ...»: Որովհետեւ ներդնողի համար աշխատանք ու աշխատատեղ կազմակերպելու համար պայմանները բարենպաստ չեն, որովհետեւ «կոռուպցիա» միջազգային հասկացությունը Հայաստանում անիրական, անշոշափելի չէ: Երբեւէ չեմ զբաղվել արտադրության կամ բենզինի հարցերով, գիտեմ այնքան, որքան գրում են լրագրերը, ասվում է հեռուստատեսությամբ ու ռադիոյով: Այս պարագայում ինձ մտահոգում է հայի վախը, հայ մարդու վախը իր հայրենիքում հաստատվելիս: Իրանում եւ Անգլիայում ապրող Համո Դավթյանի ակնարկած հայերը անշուշտ հնարավի չեն, ոչ էլ եզակի: Այս մասին տարբեր առիթներով տարբեր մարդկանցից եմ լսել: Ու բնավ պետք չէ ջայլամի կեցվածք ընդունել:

Ինձ վախեցնում է հայ մարդու վախը: Գոնե իր հայրենիքում իր վաղվա օրվա համար հայ մարդը չպիտի վախ ունենար: Միամիտ չլինենք ու չմտածենք, որ Հայաստանը զարգացած, նորմալ երկիր կարող է դառնալ նեցված օգնությունների կամ վտանգավոր վարկերի շնորհիվ: Ամեն մի երկիր ուժեղ է դառնում հենց իր բնիկ ժողովրդի հավատով, այն հավատով, որ այս երկրի մարդուն այս երկրի տերն է դարձնում՝ տիրոջ բոլոր պարտականությունները եւ ջանքը չբացառելով: Ամեն անգամ, ամեն առանձին մարդու եւ դեպքի պարագայում կարելի է հազար ու մի բացատրություն գտնել: Այդ բացատրություններն ինձ չեն բավարարում: Ես ուզում եմ, որ աշխարհի բոլոր երկրներում ապրող հայերը աշխարհի միակ Հայաստան երկրի համար անեն ամեն ինչ, եթե անգամ չգան, ամեն օր, ամեն ժամ մտածեն այս երկիրը շենացնելու մասին (ինչպես անում է Համո Դավթյանը, ինչպես անում են ուրիշները): Ու եթե հավատ կա, այս խոսքերը դատարկ կրակոց չեն լինի: Մեկ տասնամյակից ավելին տեւող մեր անկախությունը մեզանից ամեն մեկին (առավել եւս՝ իշխանավորին) սա պետք է սովորեցներ: Չեմ ուզում մտածել, որ ոչինչ չենք սովորել: Չեմ ուզում: Ուզում եմ, որ այս սովորածը գործ դառնար, իրականություն, որ ամեն հայ իր մեջ հավատ ունենար: Եթե չի լինելու, ուրեմն՝ իզուր է եղել մեր այս տասը տարին, ու երկու հայ վաղը, մյուս օրը Լոնդոնի կամ Կալկաթայի սրճարաններից մեկում կհանդիպեն:

ՍԵՐԳԵՅ ՁԱԼՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Երկու հայ առայժմ Երեւանում սուրճ խմելիս

Երկու, երեք ամիս է անցել Համո Դավթյանի հետ իմ հանդիպումից: Ու հիմա, երբ նորից դառնում եմ մեր զույգին, թվում է, թե երկու հայ մարդ (մեկը՝ հայաստանաբնակ, մյուսը՝ ծնված Իրանում) հանդիպել են օտար մի երկրում, ասենք՝ Միդնեյում կամ Նյու Յորքում եւ մեր բնույթի՝ հայի էության մասին են խոսել: Իրականում Համո Դավթյանի՝ «Կասպիան Ֆեմիլ» միավորման նախագահի հետ զույգի ենք նստել այստեղ՝ Երեւանում, միավորման գլխավոր գրասենյակում: Ու Համոն, որի ղեկավարած միավորումը գրասենյակներ ունի նաեւ Ավստրալիայի Միդնեյ եւ Ուզբեկստանի Տաշքենդ քաղաքներում, որ իր ընտանիքով (կին, երկու զավակ) եկել, Երեւանում է բնակություն հաստատել, գործ ստեղծել, հայրենիք գալուց հոգս լինելով («Ես իմ տանն եմ, իմ երեխաները հայկական դպրոցում են սովորում, հարեւաններս հայեր են, եւ իմ թիկունքը հիմա առավել ամուր է») նաեւ ասում է. «Հինգ-վեց տարի առաջ Իրանում, Անգլիայում ապրող շատ հայեր կային, որ կարողություններ ունեն, ուզում էին գալ Հայաստան: Բայց հիմա չեն գա-

լիս, դեռ սպասում են, որովհետեւ...»: Որովհետեւ ներդնողի համար աշխատանք ու աշխատատեղ կազմակերպելու համար պայմանները բարենպաստ չեն, որովհետեւ «կոռուպցիա» միջազգային հասկացությունը Հայաստանում անիրական, անշոշափելի չէ: Երբեւէ չեմ զբաղվել արտադրության կամ բենզինի հարցերով, գիտեմ այնքան, որքան գրում են լրագրերը, ասվում է հեռուստատեսությամբ ու ռադիոյով: Այս պարագայում ինձ մտահոգում է հայի վախը, հայ մարդու վախը իր հայրենիքում հաստատվելիս: Իրանում եւ Անգլիայում ապրող Համո Դավթյանի ակնարկած հայերը անշուշտ հնարավի չեն, ոչ էլ եզակի: Այս մասին տարբեր առիթներով տարբեր մարդկանցից եմ լսել: Ու բնավ պետք չէ ջայլամի կեցվածք ընդունել:

Ինձ վախեցնում է հայ մարդու վախը: Գոնե իր հայրենիքում իր վաղվա օրվա համար հայ մարդը չպիտի վախ ունենար: Միամիտ չլինենք ու չմտածենք, որ Հայաստանը զարգացած, նորմալ երկիր կարող է դառնալ նեցված օգնությունների կամ վտանգավոր վարկերի շնորհիվ: Ամեն մի երկիր ուժեղ է դառնում հենց իր բնիկ ժողովրդի հավատով, այն հավատով, որ այս երկրի մարդուն այս երկրի տերն է դարձնում՝ տիրոջ բոլոր պարտականությունները եւ ջանքը չբացառելով: Ամեն անգամ, ամեն առանձին մարդու եւ դեպքի պարագայում կարելի է հազար ու մի բացատրություն գտնել: Այդ բացատրություններն ինձ չեն բավարարում: Ես ուզում եմ, որ աշխարհի բոլոր երկրներում ապրող հայերը աշխարհի միակ Հայաստան երկրի համար անեն ամեն ինչ, եթե անգամ չգան, ամեն օր, ամեն ժամ մտածեն այս երկիրը շենացնելու մասին (ինչպես անում է Համո Դավթյանը, ինչպես անում են ուրիշները): Ու եթե հավատ կա, այս խոսքերը դատարկ կրակոց չեն լինի: Մեկ տասնամյակից ավելին տեւող մեր անկախությունը մեզանից ամեն մեկին (առավել եւս՝ իշխանավորին) սա պետք է սովորեցներ: Չեմ ուզում մտածել, որ ոչինչ չենք սովորել: Չեմ ուզում: Ուզում եմ, որ այս սովորածը գործ դառնար, իրականություն, որ ամեն հայ իր մեջ հավատ ունենար: Եթե չի լինելու, ուրեմն՝ իզուր է եղել մեր այս տասը տարին, ու երկու հայ վաղը, մյուս օրը Լոնդոնի կամ Կալկաթայի սրճարաններից մեկում կհանդիպեն:

ՍԵՐԳԵՅ ՁԱԼՈՅԱՆ

Ապրիլի 26-ին Երեւանում կբացվի սլովակյան ապրանքների ցուցահանդես-տոնավաճառը

Սայրաքաղաքի մարզահամերգային համալիրը շուտով հյուրեր կընդունի Սլովակիայից: Այստեղ ապրիլի 26-ից մայիսի 3-ը կանցկացվի այդ երկիրը ներկայացնող ընկերությունների արտադրանքի ցուցահանդես-տոնավաճառ: Միջոցառումը գործնականորեն կհամալրի այն պայմանավորվածությունների իրագործումը, որոնք ծեռք էին բերվել Երեւանում փետրվարի սկզբին՝ հայ-սլովակյան առաջին գործարարաժողովի ժամանակ:

«Մենք հուսով ենք, որ տոնավաճառը լրջորեն կխթանի երկկողմանի համագործակցությունը՝ ձեռնարկատերերի առջեւ բացելով լավ հեռանկարներ», հայտնեց ARMES սլովակյան ֆիրմայի տնօրեն Ասոն Գրիգորյանը, որն ակտիվորեն մասնակցում է տոնավաճառի նախապատրաստմանը: Սլովակիայի պատվիրակությունը կգլխավորի Չեխոսլովակիայի նախկին վարչապետ եւ արտգործնախարար Զդենեք Մորավչիկը: Դա վկայում է, թե ինչպիսի լրջությամբ են Սլովակիայում պատրաստվում հանդիպմանը, որի ընթացքում կստորագրվի երկու մայրաքաղաքների՝ Բրատիսլավայի ու Երեւանի տնտեսական եւ մշակութային համագործակցության պայմանագիր: Երեւանի քաղաքապետարանն արդեն պայմանագրի նախագիծը ուղարկել է գործընկերներին: Իրենց արտադրանքի նմուշները կներկայացնեն սլովակյան ավելի քան 50 արտադրական, առեւտրային, գբոսաշրջիկային եւ այլ ընկերություններ: Ընդ որում, ներկայացված կլինեն ոչ միայն ոլորտները, որտեղ Սլովակիան ավանդաբար հայտնի է՝ բյուրեղապակու, կոշիկի, գարեջրի արտադրություն եւ այլն, այլեւ բացառապես նոր տեխնոլոգիաներ: Նախատեսվում է նաեւ հագուստի ցուցահանդես-վաճառք՝ նորաձեւության շոուների ուղեկցությամբ: Պրն Գրիգորյանի կարծիքով, ձեւավորվում են նախադրյալներ լուրջ ներդրումների եւ գործունյա մեխանիզմի ստեղծման համար, ինչը զգալիորեն կավելացնի երկկողմ առեւտրաշրջանառության ծավալները:

Կազմակերպիչները հուսով են, որ ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն կառաջացնի ոչ միայն Հայաստանում, այլեւ հարեւան երկրներում: Նախատեսվում է Իրանից, Վրաստանից, ինչպես նաեւ Ադրբեջանից հատուկ բիզնես-ուղեւորություններ կազմակերպել Երեւան: Բավից կժամանեն ձեռնարկատերեր, որոնք աշխատում են սլովակ գործընկերների հետ եւ կցանկանային տարածել այդ աշխատանքները ամբողջ տարածաշրջանում:

Հանդիպումը չի սահմանափակվելու միայն տնտեսական հարցերով: Հանդես կգան մշակույթի ճանաչված գործիչներ, երաժշտական համույթներ, ուստի հանդիպումը կվերածվի յուրահատուկ մի տոնի՝ Հայաստանում Սլովակիայի օրերի:

ԱՍՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միջազգային

ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ

Լիբանանը նշեց Ղանայի սպանդի չորսամյա տարելիցը

1996 թ. ապրիլի 18-ի լուսաբացին Հարավային Լիբանանի Ղանա (Կանա) գաղափի մերձակայքում, որտեղ Քրիստոսը հարսանիքի ժամանակ առաջին հրաշքն էր կատարել՝ ջուրը գինու փոխելով, գործվեց ահավոր մի ոճիր, որի նմանը հազվադեպ է պատահում: Իսրայելյան ավիացիայի ու հրետանու արկերի, ռումբերի, հրթիռների տեղատարափից ՄԱԿ-ի խաչափայտի գողգոթաներն է բարձրանում: Այս «նահանջը» նույնիսկ չի նշել այն «սահմանները», որտեղ լինելու է Իսրայելը:

Ի դեպ, ՄԱԿ-ի կենտրոնականի ռմբահարման մասին իսրայելական արդարացող վարկածը չընդունելու համար էր, որ, հետագայում, հրեական շրջանակները վրեժխնդիր եղան ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար աբխարհի քաղաքական մի շարք հայտնի դեմքեր ոգեկոչելով անմեղ զոհերին ու հատուցում պահանջելով կատարված սպանդի համար: Իսկ շուրջ 72 եգիպտացի ու սիրիացի մտավորականներ ու արվեստի գործիչներ մասնակցեցին Լիբանանի նախկին վարչապետ Հարիրիի հաստատության կազմակերպած միջոցառումներին՝ «Նրանք այսպիսի անվանգության ուժերին պատկանող վրանում աղաստան գտած 200 մանուկներ, պատանիներ, ծերեր ու մայրեր ֆոսֆորային ռումբի մի պայթյունից հրո ճարակ դարձան: Այս զազրելի սպանդը բողոքի լայն ալիք բարձրացրեց աբխարհի բոլոր մայրաքաղաքներում, իսկ նահատակների հուղարկավորությունը վերածվեց պատերազմի վայրագությունների, մարդկության դեմ իրագործվող անհաշիվ եւ անպատիժ սպանդների դեմ մեծ ցույցի, որին մասնակցեցին հարյուր հազարավոր լիբանանցիներ, պետական ու քաղաքական դեմքեր, պատվիրակություններ:

Քրիստոնեության պատմության արշալույսի Ղանայի ժայռաղատկերներն ու քարանձավային աղոթատեղիներն իրենց հարեւանությամբ հավերժական հանգստի կոչեցին իսրայելյան ռազմատենչ շրջանակների զոհերին, որոնցից շատերը ոչ թե «արյունարբու ահաբեկիչներ» էին, այլ կաթնակեր մանուկներ, որոնք մոխրի վերածվեցին իրենց խանձարուրների մեջ, իբր թե «հերթական սխալ ռմբակոծության» հետեւանքով: Այդ «սխալները»՝ 1982 թ. հունիսի 5-ի Լիբանանի մասնակի զավթումից հետո 150 հազարանոց իսրայելյան բանակի կողմից, քարուքանդ արեցին հնագույն Լիբանանի չքնաղ քաղաքներն ու ավանները, որտեղ քայլել, քարոզել ու հրաշքներ է գործել Քրիստոսը, մանավանդ Ղանայում, Սուր (Տիր) ու Սայդա (Սիդոն), Նաբաթիե, Մաղդուշե քաղաքներում եւ ավաններում: Այսօր, երկարամյա «փորձերից» ու անպատիժ ոճիրներից հետո, Իսրայելի ղեկավարությունը հանկարծ «խելքի գալով», որոշել է ետ քաշվել Հարավային Լիբանանից, որի ազգաբնակչությունն ամեն օր ու երիցս, Բուսրոս Բուսրոս Ղալիին եւ գահընկեց արեցին նրան:

Նաբաթիե քաղաքի ռմբակոծումը:

Ղանայի սպանդի 4-րդ տարելիցի առիթով Լիբանանի խորհրդարանն ու Սիրիայի ժողովրդային բարձրագույն խորհուրդը մեծ շուքով նշեցին նահատակների հիշատակը: Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեբիհ Բերին ու Սիրիայի շինարարության ու վերակառուցման նախարար Մոհամմեդ Նիհադ Մշանթաթը բացումը կատարեցին զոհերին նվիրված թանգարանի ու հուրին նվիրված թանգարանի: Ապա ճառերով հանդես եկան Լիբանանի ու արաբական երեկոյան կենդանի էին» նշանաբանով:

Մինչ այդ, Լիբանանի հայ կաթողիկե համայնքի նորընտիր կաթողիկոս պատրիարք Ֆրանսիս-Պետրոս 19-րդ Թարմունին այցելեց Ղանայում գտնվող նահատակների գերեզմանները: Հայաստեր ղեկավար Նեբիհ Բերին ճաշկերույթով պատվեց հայ կաթոլիկների պատվիրակությանը Սուր քաղաքի հանգստավայրում:

Այսպիսով, բազմաչարչար Լիբանանը մի անգամ եւս նշեց իր նահատակ զավակների հիշատակը:

Հ. Մ.

Իսրայելի հերթական խաղը՝ միակողմանի հեռանալ Լիբանանից

Իսրայելի դեսպանը ՄԱԿ-ում ապրիլի 17-ին իր կառավարության պաշտոնական գրավոր ուղերձն է հանձնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանին, որ իր երկիրը որոշել է մինչեւ հուլիսի 7-ը դուրս բերել իսրայելական զորքերը Լիբանանի գրավյալ հողերից: Փաստորեն 22 տարվա օկուպացիայից հետո Թել Ավիվը «վճռել» է ի կատար ածել 1978 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 425 որոշումը՝ Լիբանանի հարավից անհապաղ հեռանալու մասին: Եբրայական պետությունը, որ երբեք հաշվի չի առել ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձեւը, ինչո՞ւ «հանկարծ» հիշեց դրանց իրագործման մասին: Իհարկե, Իսրայելի վերոհիշյալ ծպտությունն այնքան էլ հանկարծակի չէ, քանզի 1999 թ. ընտրվելուց հետո վարչապետ Եհուդ Բարաքը «խոստացել» էր մեկ տարվա ընթացքում դուրս գալ Լիբանանից: Սակայն չէ՞ որ այդ խոստումը կարող էր մնալ լոկ այդպիսին:

Նկատենք, որ Բարաքի այդ ցանկությունը վերածվեց գործնականի, երբ պարզություն անցավ մարտի 26-ին Ժնեւում կայացած Ասադ-Քլինթոն հանդիպումը: Այսինքն, երբ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը կտրականապես մերժեց Քլինթոնի միջոցով փոխանցված Բարաքի առաջարկները՝ սիրիական գրավյալ Գոլանի հողերի ու ջրերի հարցում զիջումներ անելու վերաբերյալ: Դամասկոսի նկատմամբ Ժնեւում գործադրված անկասկած ճնշումներին կա-իսրայելական ուղղակի ճնշումները հոդս ցնդելուց հետո, ըստ ներքուստի, Բարաքի կառավարությունը դիմում է անուղղակի ճնշումների՝ իր զորքերը միակողմանիորեն Լիբանանից հեռացնելու միջոցով: Միեւնույն ժամանակ սպառնալով, թե այս քայլն իրականացնելուց հետո ուժգնորեն հակադարձելու է իր տարածքի հանդեպ կատարվելիք որեւէ հարձակում եւ պնդելով, որ առճակատման համար այնուհետեւ որեւէ պատրվակ չի մնալու:

Անշուշտ, սա հերթական խորամանկ ծեւ է, քանի որ իսրայելա-լիբանանյան հակամարտությունն ավելանալով հակամարտությունն ավելի լիովին է, քան գրավյալ հողերի խնդրի լուծումը: Նույնը կարելի է ասել նաեւ իսրայելա-սիրիական տարաձայնության մասին: Միակողմանի հեռացումով Թել Ավիվը փորձում է խուսափել այնպիսի հիմնահարցերի կարգավորումից, ինչպիսիք են շուրջ կես միլիոն պաղեստինցի փախստականների վերադարձը, Լիբանանին հասցված վնասների փոխհատուցումը, որոնք, ըստ պաշտոնական Բեյրութի, կազմում են 70 միլիարդ դոլար, ինչպես նաեւ, այսպես կոչված, «հարավլիբանանյան բանակի» գոյությունը, որն Իսրայելն է ստեղծել եւ շարունակում է, թե պաշտպանելու է նույնիսկ իր զորքերի հեռանալուց հետո:

Ահա թե ինչու պաշտոնական Բեյրութն ու Դամասկոսը թերահավատությամբ են վերաբերվում Իսրայելի ինքնագլուխ քայլին: Ուստի նրանք բազմիցս հայտարարել են, որ նման պարագայում չեն կարող երաշխավորել եբրայական երկրի անվտանգությունը: Իսկ այս հանգամանքը խեղաթյուրելով, Իսրայելը ծեւավորում է այն պատրանքը, թե իբր Սիրիան եւ Լիբանանը դեմ են խաղաղության հաստատմանը: Իրականում, խուսափելով արդար եւ համապարփակ խաղաղ կարգավորումից, Թել Ավիվը ձգտում է հասնել կիսաս լուծումների՝ առիթ ստեղծելով ցանկացած պահի ապակայունացնելու տարածաշրջանը, դեռ, որ նրան է վերապահվել ի սկզբանե:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ

«Եհովայի վկաներ» աղանդը հակաքրիստոնեական է, հակապետական եւ հակահասարակական

Հայտարարում է Վրաստանի պատրիարքարանը

ԹԲԻԼԻՍԻ, 18 ԱՊՐԻԼ, ՄՆԱՐՔ՝ «Վրաստանում գործում է 11 կրոնական աղանդ, եւ ինչպես երեւում է, Վրաստանի կառավարությունն ուշի կգա միայն այն բանից հետո, երբ երկրում զանգվածային սպանություններ եւ ինքնասպանություններ սկսվեն», հայտարարել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Գուրամ Շարաձեն:

Ապրիլի 17-ի մամուլի ասուլիսի ժամանակ պատգամավորը հայտարարել է, որ վերջերս Թբիլիսիում վախճանված 21-ամյա եհովականի մահվան համար պատասխանատու են Վրաստանի նախագահը, որը խորհրդարան չի ներկայացրել կրոնի մասին օրենք, եւ խորհրդարանը, որը ձգտել է չնկատել այդ օրենքի բացակայությունը, ինչպես նաեւ Գիտությունների ակադեմիան եւ պետհամալսարանը, որոնք իրենց փորձաքննական եզրակացություններով նպաստել են, որպեսզի «Եհովայի վկաներ» աղանդը շահի դաշը, որտեղ Գուրամ Շարաձեն փորձել է հասնել Վրաստանում նրանց գործունեության արգելման:

Ապրիլի 13-ին փետրվարի ախտորոշումով Թբիլիսիի առաջին կլինիկական հիվանդանոց է տեղափոխվել 21-ամյա Լիա Ջանկանիծեն: Բժիշկները հավաստում են, որ աղջկա կյանքը հնարավոր էր փրկել, սակայն նա «Եհովայի վկաներ» աղանդի ներկայացուցիչ էր, որի անդամները հրաժարվում են արյան փոխներարկումից:

Վրաստանի պատրիարքարանի մամուլի ծառայությունը նշում է, որ Եհովականների ուսմունքը վտանգի է ենթարկում կյանքը եւ առողջությունը, թուլացնում է պետության պաշտպանունակությունը, քանի որ Եհովականները հրաժարվում են նաեւ պաշտպանել հայրենիքը եւ ծառայել բանակում:

«Ուղղափառ եկեղեցին եւս մեկ անգամ հայտարարում է, որ «Եհովայի վկաներ» աղանդը հակաքրիստոնեական, հակապետական եւ հակահասարակական է», ընդգծվում է հայտարարության մեջ: Աղանդը մեծ վտանգ է ներկայացնում եւ հետագայում կարող է Վրաստանին լուրջ խնդրի առաջ կանգնեցնել, եթե պետությունը չհասկանա եւ համապատասխան միջոցներ չկիրառի, ընդգծում է պատրիարքարանը:

ԵՎՐՈՊԱ

Այլատյացություն Գերմանիայի ընտրություններում

«Կրթություն մեր երիտասարդներին, ոչ՝ ներգաղթին»՝ այս կարգախոսով է ներկայանում քրիստոնեա-դեմոկրատ Յուրգեն Ռյուտգերսը Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայում մայիսի 14-ին կայանալիք երկրամասային ընտրություններին: Ըստ որում, սա Ռյուտգերսի երկրորդ, համեմատաբար մեղմ ձեւակերպումն է. նրա նախնական կարգախոսում այլատյացությունն ավելի ընդգծված էր:

Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերը ծրագրում է երկրում տեղեկագիտության-բարձրակարգ մասնագետների պակասը լրացնել օտարերկրացի մասնագետների հաշվին: Նախատեսվում է ոչ եվրոպական երկրների 20 հազար տեղեկագետների Գերմանիայում աշխատելու իրավունք տալը: Գերմանացի արդյունաբերողները ողջունում են այդ նախաձեռնությունը, քանզի մասնագետների վերապատրաստման ծրագրերը չեն արդարացնում արագորեն զարգացող շուկայի պահանջները, եւ ամեն տարի 80 հազար աշխատատեղ մնում է թափուր: Գերմանիայի կառավարությունը երկյուղում է, որ թափուր աշխատատեղեր ունեցող ձեռնարկությունները կարող են լքել երկիրը:

Իսկ ինչո՞վ բացատրենք Յուրգեն Ռյուտգերսի կարգախոսի ծագումը: Բանն այն է, որ կուսակցության գաղտնի ֆինանսավորման սկանդալից թուլացած Քրիստոնեա-դեմոկրատական միությունը (ՔԴՄ) ընտրություններում հաղթելու քիչ հույսեր ունի, ուստի դիմել է պոպուլիստական փաստարկների օգնությանը: Գերմանիայում, որտեղ 4 միլիոն գործազուրկ կա, օտարներին աշխատանքի իրավունքի տրամադրումը բացասաբար է ընկալվում շատերի կողմից: Չնայած ՔԴՄ գործիչներից ոմանք քննադատում են Ռյուտգերսի կարգախոսը, նրան աջակցություն է հայտնել կուսակցության նոր նախագահ Անգելա Մերկելը: «Պուեն» հանդեսի վկայությամբ, Գերմանիայում շատերը Ռյուտգերսին անվանում են «Հռենոսի Հայդեր», նկատի ունենալով ավստրիացի ծայրահեղ աջերի լիդեր Յորգ Հայդերին:

Ռյուտգերսի միջոցով ՔԴՄ-ի ռազմավարության հեղինակները փորձում են կրկնել անցյալ տարվա փորձը, երբ կուսակցությունը Հեսսենի երկրամասում հաջողության հասավ՝ արշավ ծավալելով Շրյոդերի կառավարության մշակած երկքաղաքացիության ծրագրի դեմ: Այս անգամ քրիստոնեա-դեմոկրատները շեշտը դրել են ներգաղթի սահմանափակման վրա: Խոսքը գլխավորապես հնդիկների մասին է, քանի որ Գերմանիայում տեղեկագիտության օտարերկրացի լավագույն մասնագետները հնդիկներն են:

Իսպանացի «օրինակելի» բանկատերը բանտարկվեց

1980-ական թվականներին Իսպանիայում փայլուն հաջողություններ էր հասել բանկատեր Մարիո Կոնդեն: Նրան նույնիսկ օրինակելի էին համարել, պնդելով, թե Կոնդեն իր ասպարեզում առաջադիմել է լոկ անձնական արժանիքների շնորհիվ:

Բայց օրերս Իսպանիայի դատական մարմինները Կոնդեին 10 տարվա բանտարկության դատապարտեցին միջոցների յուրացման եւ խարդախության մեղադրանքով: Խոսքը Կոնդեի 1987-1993 թթ. գործունեության մասին է, երբ նա «Բանեստո» բանկի նախագահն էր: Կոնդեի դատապարտումը Իսպանիայի արդի պատմության ամենաերկարատեւ դատավարության վերջաբանը դարձավ:

Մարիո Կոնդեի «աստեղային պահը» Ֆելիպե Գոնսալեսի վարչապետության տարիներն էին: Բայց երբ Կոնդեի բանկային փաստաթղթերում մոտ 47 միլիոն դոլարի հասնող անբացատրելի բաց հայտնաբերվեց, նա ենթարկվեց հասարակության պարսավանքին: Իր ողջ հմայքն ու ճարպկությունը գործի դնելով՝ Կոնդեն ամեն ինչ արեց դատական հետապնդումներից խուսափելու համար: Այդ նպատակով նա վարկաբեկիչ փաստաթղթերով ճնշում գործադրեց Գոնսալեսի կառավարության վրա, օգտվեց գաղտնի գործակալների ծառայություններից, փորձեց կաշառել դատավորներին, լրատվամիջոցներին:

Բոլոր ջանքերն ապարդյուն էին: «Պուեն» հանդեսը նշում է, որ անցյալ տարվա սեպտեմբերին պայմանականորեն ազատ արձակված Կոնդեն ամեն կերպ փորձել է խույս տալ դատական պատժից: Այս տարվա մարտի 12-ին նա նույնիսկ իր թեկնածությունն առաջադրեց ընդհանուր օրենսդրական ընտրություններում, որպեսզի ընտրվելու դեպքում խորհրդարանական փրկարար անձեռնմխելիություն ձեռք բերի: Ավա՜ղ, նա ստացավ ընդամենը 24 հազար քվե եւ արժանացավ հանրության ծաղրուծանակին: Պատիժը դարձավ անխուսափելի:

Պ. Բ.

ԱԶԳ

Մշակույթ

Անցյալ տարվա թվականով «Արեգ» հրատարակչությունում լույս է տեսել «Բարեւ, ես եմ» վերնագրով գունավոր, գեղատիպ, լուսանկարներով ու գծանկարներով հարուստ մի գրքույկ, որը նախատեսված է Հայաստանի 1-3-րդ դասարանների երեխաների համար ու առերեւույթ նպատակ ունի նրանց ծանոթացնելու իրենց իրավունքներին ու պարտականություններին: 32 էջանոց գրքույկի հեղինակային խմբի անդամներ են հայտարարվում Հելգե Բրոմանը, Հոհան Վալը եւ Անահիտ Մկրտչյանը: Կա նաեւ 6 հայերից կազմված փորձագիտական եւ խմբագրական խորհուրդ: Վաճառքի ենթակա չեղող այս հրատարակությունը ֆինանսավորվել է «Փախստականների հարցերով նորվեգական խորհրդի» կողմից եւ նվիրված Սեւանա լճին:

- Հայ երեխային գրքույկը «դաստիարակում է» այն համոզմունքով, որ խաղաղիրք ժողովուրդները եվրոպայի ու ԱՄՆ-ի ժողովուրդներն են, որոնց հետ միայն արժե բարեկամանալ: 6-րդ էջում հայ երեխային հարց է տրվում. «Կարո՞ղ ես ընկերանալ ֆրանսիացու, անգլիացու, լիտվացու հետ»: 10-րդ էջում նրան առդեն պարզորոշ ասվում է, թե ո՞ւմ հետ պետք է բարեկամանալ: Շան հաչոցի ու աքլորի ծուղրուղու ցուցակը (էջ 10) ունի հետեւյալ հաջորդականությունը՝ հայ, ադրբեջանցի, բոսնիացի, չեխ, անգլիացի, ֆինն, ֆրանսիացի, վրացի, գերմանացի, իսլանդացի, իտալացի, լատվիացի, նորվեգացի, լեհ, իսպանացի, սուահիլի, թուրք:

Ուշադրության արժանի են հետեւյալ կետերը.

- Ցուցակը սկսում են հայն ու ադրբեջանցին, իսկ ավարտում է թուրքը:

- Թվարկված բոլոր ժողովուրդները կամ ՆԱՏՕ-ի անդամ, կամ նրան նոր անդամակցած, կամ նրանում ընդգրկվելու մարմաջով տարված երկրների ժողովուրդներ են: Էկզոտիկայի համար ընդգրկել են նաեւ «սուահիլին», որը ոչ թե ժողովրդի անուն է, այլ Արեւելյան Ափրիկեի ժողովուրդների լեզվի անունը:

- Ամբողջովին անտեսվել են աֆխարհի բնակչության կեսից ավելին ունեցող Ասիայի եւ Լատինական Ամերիկայի ժողովուրդները՝ չինացին, ճապոնացին, հնդիկը, պարսիկը, արաբը եւ, վերջապես, ռուսը: Բայց մի խեղճ վիետնամցի երեխայից (էջ 30) հայ երեխան պետք չէ իմանա այս ժողովուրդների գոյության մասին, հետեւաբար պետք չէ բարեկամանա նրա հետ:

- Վերոհիշյալ նյութի վտանգավորությունն առավել հասկանալի է դառնում, երբ նույն 10-րդ էջի ներքեւում կարդում ենք բառացիորեն հետեւյալը. «Եթե հայ կատուն հանդիպի ֆրանսիացի կատվի, նրանք կհասկանա՞ն իրար»: Հաջորդ էջում պարզվում է, որ կան «հոլանդացի ափաղաղ» եւ «հույն վագր»:

Մի կողմ թողնելով այն ենթադրությունը, որ Հունաստանում այսօր վագր կա՞, թե՞ ոչ, մեզ համար գլուխ է, որ կան ժողովուրդների (եւ ոչ թե տեղանունների) անունով կոչվող, նույնիսկ «այլազգի կենդանիներ», որոնք նույնիսկ «այբուբեն են օգտագործում», ունեն «իրենց հարազատ տառերը» (էջ 11): Այո՛, մի զարմացեք, ըստ գրքույկի հեղինակների՝ անասուններն էլ ազգություն եւ այբուբեն ունեն...

- Էջ 14-15-ում նկարագրվող օդաթռիկների խաղում բացատրվում է, որ օդաթռիկն օդում պահելու միջոցներից մեկը բալաստից ազատվելն է: Ու հայ երեխային առաջարկվում են բալաստի 10 փաթեթ, որոնցից 9-ը է երեխայի «ցանկացած կրոնի դավանելու իրավունքը» (շարադրանքի սխալը հեղինակներինն է- Գ. Յ.): Դե հիմա արի ու «Եհովայի վկաներին» զոհաբերված երեխային հասկացրու, որ սխալ է անում: Ո՞նց թե, նա ունի ցանկացած կրոն դավանելու իրավունք...

- Կա առավել սահմռկելին: 16-րդ էջում, տեղեկությունը Շվեդիայի երեխաներին վերագրելով, հայ երեխային Հայաստանի դպրոցներում դասավանդվում է «Չենք ուզում զորակոչվել բանակ», «Չենք ուզում շաս աֆխատել»: ՀՀ պաշտպանության նախարարությունն ինչպե՞ս է ակնկալում այսպիսի դաստիարակություն ստացողներից հայկական բանակում զորակոչվելը մեկ տասնամյակ հետո: Իսկ աֆխատանքի նկատմամբ նման արհամարհական վերաբերմունքը տանում է ազգի ու անհատի վերջնական կործանման:

- 29-րդ էջում տպագրված է փոքր պատմվածք՝ «Ամենակարեւոր մարդը» ցցուն վերնագրով ու այդ մարդու դիմանկարով: Պատմվածքի թեման առերեւույթ համեստության ու փոխօգնության գաղափարների մասին է: Բայց ենթատեքստը շաս հստականում է այդ մարդու ինքնությունը իմանալով: Ի՞նչ եք կարծում, հայ երեխայի համար ո՞վ պետք է լինի «ամենակարեւոր մարդը». Հայկ Նահապե՞տը, Վարդան Մամիկոնյա՞նը, Անդրանի՞կը... Ոչ, որպես ամենակարեւոր մարդ նա պետք է ընդունի Ջորջ Վաշինգտոնին: Ենթատեքստը պարզ է՝ ամենակարեւոր երկիրը ԱՄՆ-ն է, ամենակարեւոր փողը՝ դոլարը, ամենա-ամենաները՝ միայն ամերիկյանները:

Գրքույկում վխտում են նման բազմաթիվ թույներ, նաեւ շարադրական ու մտքի բազմաստիճան սխալներ, որոնց չենք անդրադառնում հոդվածի ծավալի պատճառով:

Եզրակացնելով ասենք, որ «Բարեւ, ես եմ» գրքույկն անհապաղ պետք է դուրս շպրտվի Հայաստանի դպրոցներից, այլապես այլասերումը անխուսափելի է դառնում նման ոչ հայեցի դաստիարակության դեպքում:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՅԱՆ

Սիազանգ

Չգո՞ւշ, թույն է

«Երաշխավորված է ՀՀ կրթության ու գիտության նախարարության կողմից»:

Մեր ունեցած տեղեկություններով, գրքույկը որպես դասագիրք արդեն գործածվում է Հայաստանի շուրջ 300 դպրոցներում, ուր մտցվել են համապատասխան դասընթացներ:

Գրքույկը բաժանված է չորս մասի՝ հետեւյալ պայմանական վերնագրերով. խաղաղություն, ազատություն, արդարություն (էջ 5-16), Սնունդ (էջ 17-22), Ջուր (էջ 23-29), Պարտականություններն են իրավունքներ տալիս (էջ 30-32):

Հայ երեխայի համար գրքույկի ներկայացրած վտանգավորության աղբյուրներն այնքան շաս են, որ ներքեւում բավարարվում ենք դրանց մի մասին անդրադառնալով միայն:

- Հայ մարդուն, առավել եւս երեխային, ի՞նչ կարող են փոխանցել Դորոթի Լո Նոլթ եւ Բենկս-երիկ Հեդին անունները (էջ 3-4): Ովքե՞ր են նրանք: Առաջինից երեխաների աֆխարհընկալման մասին տողեր են մեջբերված, երկրորդից՝ մի չափածո, որը միայն ծիծաղ կարող է առաջացնել. «Ահա եւ ես- Ահա մի ծեռ- Այդ ես եմ- Ահա մի թեւ- Այդ ես եմ»: Ու այս «նեյնիմով» ներկայացնում են ոտնաթաթը, ոտը, մարմինը, աչքը, ականջը, քիթը, բերանը (էջ 4): Իսկ ո՞ւր են ամենակարեւորը՝ սիրտը, ուղեղը եւ, վերջապես, հոգին: Մի՞թե հայ մանկագիրների մոտ առավել հաջող տողեր չկան:

- Գրքույկի բազմաստիճան լուսանկարների մեջ հայությանն առնչվողների մասը չի հասնում նույնիսկ 10 տոկոսի: Ամբողջ շարադրանքում «զուտ հայկական» է ընդամենը 2 տող՝

- Ցուցակը սկսում են հայն ու ադրբեջանցին, իսկ ավարտում է թուրքը:

- Թվարկված բոլոր ժողովուրդները կամ ՆԱՏՕ-ի անդամ, կամ նրան նոր անդամակցած, կամ նրանում ընդգրկվելու մարմաջով տարված երկրների ժողովուրդներ են: Էկզոտիկայի համար ընդգրկել են նաեւ «սուահիլին», որը ոչ թե ժողովրդի անուն է, այլ Արեւելյան Ափրիկեի ժողովուրդների լեզվի անունը:

- Ամբողջովին անտեսվել են աֆխարհի բնակչության կեսից ավելին ունեցող Ասիայի եւ Լատինական Ամերիկայի ժողովուրդները՝ չինացին, ճապոնացին, հնդիկը, պարսիկը, արաբը եւ, վերջապես, ռուսը: Բայց մի խեղճ վիետնամցի երեխայից (էջ 30) հայ երեխան պետք չէ իմանա այս ժողովուրդների գոյության մասին, հետեւաբար պետք չէ բարեկամանա նրա հետ:

- Վերոհիշյալ նյութի վտանգավորությունն առավել հասկանալի է դառնում, երբ նույն 10-րդ էջի ներքեւում կարդում ենք բառացիորեն հետեւյալը. «Եթե հայ կատուն հանդիպի ֆրանսիացի կատվի, նրանք կհասկանա՞ն իրար»: Հաջորդ էջում պարզվում է, որ կան «հոլանդացի ափաղաղ» եւ «հույն վագր»:

Մի կողմ թողնելով այն ենթադրությունը, որ Հունաստանում այսօր վագր կա՞, թե՞ ոչ, մեզ համար գլուխ է, որ կան ժողովուրդների (եւ ոչ թե տեղանունների) անունով կոչվող, նույնիսկ «այլազգի կենդանիներ», որոնք նույնիսկ «այբուբեն են օգտագործում», ունեն «իրենց հարազատ տառերը» (էջ 11): Այո՛, մի զարմացեք, ըստ գրքույկի հեղինակների՝ անասուններն էլ

բանակ», «Չենք ուզում շաս աֆխատել»: ՀՀ պաշտպանության նախարարությունն ինչպե՞ս է ակնկալում այսպիսի դաստիարակություն ստացողներից հայկական բանակում զորակոչվելը մեկ տասնամյակ հետո: Իսկ աֆխատանքի նկատմամբ նման արհամարհական վերաբերմունքը տանում է ազգի ու անհատի վերջնական կործանման:

- 29-րդ էջում տպագրված է փոքր պատմվածք՝ «Ամենակարեւոր մարդը» ցցուն վերնագրով ու այդ մարդու դիմանկարով: Պատմվածքի թեման առերեւույթ համեստության ու փոխօգնության գաղափարների մասին է: Բայց ենթատեքստը շաս հստականում է այդ մարդու ինքնությունը իմանալով: Ի՞նչ եք կարծում, հայ երեխայի համար ո՞վ պետք է լինի «ամենակարեւոր մարդը». Հայկ Նահապե՞տը, Վարդան Մամիկոնյա՞նը, Անդրանի՞կը... Ոչ, որպես ամենակարեւոր մարդ նա պետք է ընդունի Ջորջ Վաշինգտոնին: Ենթատեքստը պարզ է՝ ամենակարեւոր երկիրը ԱՄՆ-ն է, ամենակարեւոր փողը՝ դոլարը, ամենա-ամենաները՝ միայն ամերիկյանները:

Գրքույկում վխտում են նման բազմաթիվ թույներ, նաեւ շարադրական ու մտքի բազմաստիճան սխալներ, որոնց չենք անդրադառնում հոդվածի ծավալի պատճառով:

Եզրակացնելով ասենք, որ «Բարեւ, ես եմ» գրքույկն անհապաղ պետք է դուրս շպրտվի Հայաստանի դպրոցներից, այլապես այլասերումը անխուսափելի է դառնում նման ոչ հայեցի դաստիարակության դեպքում:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՅԱՆ

ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

Միջազգային գիտաժողով Անատոլ Ֆրանսի հիշատակին

Հայոց ցեղասպանության 85-ամյակի առթիվ նախատեսված միջոցառումների շարքում ապրիլի 22-ին Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում իր աշխատանքը կսկսի «Անատոլ Ֆրանսը եւ հայ ժողովուրդը» միջազգային գիտաժողովը: Հայ ժողովրդի մեծ բարեկամ, նշանավոր գրող ու հրապարակախոս Անատոլ Ֆրանսը եվրոպացի այն ազնիվ մտավորականներից էր, որ իր ազդու ձայնը բարձրացրեց ի պաշտպանություն թուրքական բարբարոսությանը զոհ դարձող «արեւելքի քրիստոնյա բոլշեւիկների»:

Գիտաժողովը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ-ն, Իտալիայի հայերի եւ հայ-իտալական միությունները, «Հայաստան-Ֆրանսիա» բարեկամության ընկերությունը: Ծրագրում ակադեմիկոս Գեւորգ Բուտյանի բացման խոսքն է, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի եւ «Հայաստան-Ֆրանսիա» ընկերության նախագահ, կոնսերվատորիայի պրոֆեսոր Ծովինար Շաքոյանի ելույթները, 5 զեկուցումներ, որոնց թվում՝ Ֆլորենցիայի համալսարանի պրոֆեսոր Հիլմար Կայսերի «Թուրքական ժխտման կազմավորումը», Գաբրիել Նիսիմի (գրող, Պադուայի համալսարան) «Յաղ Փաշեմում արդարության հայեցակետի ծնունդը եւ նրա ունիվերսալ նշանակությունը բոլոր ցեղասպանությունների համար»:

Երկօրյա գիտաժողովը կավարտվի Անատոլ Ֆրանսի հիշատակի մեծարման արարողությամբ՝ Հայոց ցեղասպանության թանգարանում, որի ընթացքում Ֆրանսի գերեզմանից վերցված հողով ածյունասափորը կամփոփվի Հայոց մեծ եղեռնի հուշահամալիրի պատի մեջ:

ՕՐՎԱԾՈՒՅՑ

Ապրիլի 19

- 1588 թ. մահացավ իտալացի գեղանկարիչ Պաոլո Վերոնեզեն:
- 1772 թ. ծնվել է անգլիացի տնտեսագետ Դավիդ Ռիկարդոն:
- 1824 թ. մահացել է անգլիացի բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը:
- 1881 թ. մահացել է անգլիացի պետական գործիչ Բենջամին Դիզրայելին:
- 1882 թ. մահացել է անգլիացի բնագետ, էվոլյուցիոն տեսության եւ բնական ընտրության միջոցով կենդանիների եւ բույսերի տեսակների ծագման տեսության հիմնադիր Չարլզ Դարվինը:
- 1929 թ. ծնվել է ավեդ դերասան Մախ Ֆոն Սյուդովը: Սյուդովին հաղթահարելի էին բոլոր՝ ե՛ւ դրամատիկական, ե՛ւ կոմիկական դերերը:
- 1958 թ. մահացավ երգչուհի Հայկանուշ Դանիելյանը:
- Այս օրը հին հայկական տոմարով Աիեկան ամսվա Անահիտ օրն է:

ՆԱԻՐԱ ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

«Ես բեմ չեմ ելնում հայտարարություններ անելու».

ասում է Երվանդ Մանարյանը

Երվանդ Մանարյանը պարապ նստել չի կարող: Նա միշտ պետք է շարժման մեջ լինի, ընթացքի մեջ: Թատրոն, կինո, հեռուստատեսություն... Ամեն տեղ նա կարողացել է իր խոսքն ասել, իր ես-ը հաստատել: Եվ ահա մի նոր հաստատում. ստեղծել է «Նոր թատրոն», որի առաջին ներկայացումը՝ Արման Վարդանյանի «Երնջակ» պիեսի բեմադրությունը կայացավ բոլորովին վերջերս: Երեւանում, Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի նկուղահարկում, փոքրիկ մի սրահում 45 հանդիսատեսի համար ներկայացում տրվեց: Դեռ վաղ է այս բեմադրության ճշմարիտ գնահատականը տալ, առավել եւս մասնագետ-թատերագետները չեն շտապում: Երեւույթն այն է, որ երեւում, Հայաստանում ստեղծվել է եւս մեկ թատրոն: Շորս տարուց ավելի Մանարյանը երազել է այսպիսի թատրոնի մասին, հնարավորություններ է փնտրել, պիեսներ է ընտրել, ծանոթացել է պրոֆեսիոնալ շաս ու շաս արտիստների խաղին: Եվ որպեսզի ստեղծի իր՝ Երվանդ Մանարյանի թատրոնը, հրաժարվել է պրոֆեսիոնալներից: «Անշուշտ, թատրոնի համար անչափ կարեւոր է արհեստավորության գաղտնիքներին տիրապետելը, ասում է արվեստագետը: Բայց ես չեմ ուզում, որ իմ թատրոնում, այն թատրոնում, որտեղ պետք է իրականացվեն իմ գաղափարները, բեմում որեւէ մեկը ծեւացնի, խաղա (այս հասկացության վաս իմաստով)»: Եվ, ահա բեմում Երվանդ Մանարյանի հետ երկու երիտասարդ աղջիկներ են՝ էջմիածնի ակումբագրադարանի տեխնիկումի շրջանավարտ Լիանա Սարգսյանը եւ դպրոցից հետո թատերախումբ հրավիրված Հասմիկ Մնացականյանը: Ստացվել է այնպես, որ փոքրիկ բեմի վրա, փոքրիկ սրահում տեղավորված 50-ի էլ չհասնող հանդիսատեսի համար այսօրվա (եւ մշտնջենական) մի թեմայի՝ սերունդների փոխհարաբերության մասին հետաքրքիր երկխոսություն է ստացվել:

Մեծ հարցադրումներ առաջարկելը, կարեւոր խնդիրների մասին խոսելը հնարավոր է նաեւ կամերային տիպի թատրոններում: Այս պարագայում ներկայացման որակով է ամեն ինչ պայմանավորվում եւ ոչ թե ներկայացված գործի մեծությամբ: Հազվադեպ չեն եղել այնպիսի դեպքերը, երբ Շեքսպիր կամ Լոպե դե Վեգա է տրանսվել առաջնորդ բեմադրությունների պատճառով: Կամերային թատրոնը, որը կարելի է համեմատել ազնվականական սալոնների հետ, հնարավորություն են տալիս կարեւոր խնդիրներ լուծել եւ միշտ լուծել: «Նոր թատրոնի» առիթով երկխոսությունն ստացվել է:

Մեկ ամիս հետո պատրաստվում է իր՝ Երվանդ Մանարյանի «Սայլակը» պիես-մենախոսության ներկայացումը, որի բեմն մեր այսօրն է, մեր օրերի իրադարձությունների, բարոյական հարցերի, բարոյական միասնականության խնդիրները: Սպասենք եւս մեկ ամիս եւ գնահատենք այս նոր աֆխատանքը: Իսկ մինչ այդ նկուղային հարկում, որը հարմարավետության, ջերմության զգացում է ստեղծում, Երվանդ Մանարյանի հետ զրուցում ենք այս նոր թատրոնի եւ նրա գեղարվեստական ղեկավարի գեղագիտական սկզբունքների մասին:

- Իմ առաջը բնավ հայտնագործություն չեմ համարում, ասում է Երվանդ Մանարյանը: Հեղինակային թատրոններ շաս են ստեղծվել եւ նորից կստեղծվեն: Արվեստագետը վերցնում է ավանդական թատրոնի նվաճումները, իր ունեցածն ավելացնում եղածին, եւ մի նոր որակ է ստացվում: Ես կարծում եմ, որ այս տիպի թատրոնում եւ պիեսի հեղինակը, եւ բեմադրիչը, առավել եւս այս երկուսի մտահղացումը ներկայացնող դերասանը պետք է համոզված լինեն իրենց ասելիքում: Եթե համոզված չես, ապա թատերական, արտիստական ընդհանուր հայտարարություններ անելն անիմաստ է: Մենք ցանկանում ենք խոսել մեր հանդիսատեսի հետ՝ մեր ու նրա ամենանուրբ զգացմունքների, ամենացավոտ հարցերի մասին, խոսել, որպեսզի կարողանանք միասին գտնել երջանիկ ապրելու բանալին:

Երվանդ Մանարյանն անցել է հայ թատրոնի բոլոր բավիղներով ու միջանցքներով, լավ գիտե այդ թատրոնը:

- Թատրոնը ֆենոմեն երեւույթ է մարդու կյանքում: Այն երբեք չի մեռնում, չի կարող մեռնել: Բայց, իհարկե, մեծ փոխակերպումներ ապրում է: Թատրոնը մարդ-հասարակության զարգացման, այլաբանական լավագույն արտահայտիչն է: Հասարակության մեջ կատարվող բոլոր ներքին խմորումները, որոնք միշտ էլ հասցնում են հեղափոխությունների, իր լավագույն արտահայտությունը կարող են գտնել թատրոնում: Թատրոնն արվեստի մյուս տեսակների համեմատությամբ ունի առավելություն՝ կարող է կենդանի, անմիջական ազդեցություն թողնել: Այդ իսկ պատճառով ինձ համար միշտ էլ ծիծաղելի են թվում թատրոնի մեռնել-չմեռնելու մասին հայտարարությունները: Ես՝ բեմ ելած արտիստս այսօր խաղում եմ նրանց համար, ովքեր այսօր այստեղ նստած են: Վաղը նույն ներկայացումը կխաղամ արդեն ուրիշների համար: Անմիջական կապն իր պայմաններն է թելադրում: Արտիստը, դերասանն անտարբեր չի կարող լինել երբեք: Նա նույն խոսքը, նույն միտքն ամեն օր նոր ոգով է ասում: Եվ որքան ճշմարիտ ու կրքոտ է, այնքանով ստացվում կամ չի ստացվում ներկայացումը: Դժբախտաբար մենք թատրոնը միշտ այս ծեւի մեջ չենք պահել, այս չափանիշերով չենք մոտեցել թատրոնին:

- Տեսեք ինչ է կատարվել, պրն Մանարյան: «Սովետական թատրոն» կոչվածը «սովետական գաղափարախոսություն» կոչվածի արտահայտիչն էր: Եվ շաս հաճախ ծայրահեղ անմտության էին հասնում ներկայացումները: Այսօր, երբ անկախ երկրում ենք ապրում, եւ արվեստն ու մշակույթն էլ անկախ են պետական, իշխանական պարտադրանքից, ստեղծվում են ամենաանհեթեթ ներկայացումներ՝ անկեղծ, էրոտիկ (երբեմն էրոտիկայի սահմանները անցնող) ֆարսեր:

- Անշուշտ, պետական, իշխանական պատվերը, անգամ հովանավորչությունը կործանարար է թատրոնի համար: Ամեն մի պատվեր ու հովանավորչություն անպայման պարտադրանք է: Այս իմաստով ես ընդունում եմ թատրոնի ազատությունը: Իհարկե, այս ազատությունը նաեւ կարող է հասցնել ամենասնճաշակ, երբեմն գռեհիկ ներկայացումների: Բայց ժամանակի ընթացքում ամեն ինչ կմաքրվի, ճշմարիտ թատրոնը միշտ էլ կունենա իր մնայուն հանդիսատեսը: Ես եւ իմ կողմից այսօր կանգնած 7-8 երիտասարդներն անկախ թատրոնի կողմնակիցն ենք...

Երվանդ Մանարյանը եւս մեկ անգամ թատրոն է ստեղծել, թատրոն է ղեկավարում: Ճանաչված արվեստագետին եւ նրա թատրոնին ցանկանանք ծրագրերի ու նպատակների իրականացում՝ հույս փայփայելով, որ մեզ ճշմարիտ ու պրոֆեսիոնալ բեմադրություններ կներկայացվեն:

ՄԵՐԳԵՆ ԳԱԼՈՅԱՆ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Որոշվեցին պատանեկան առաջնության հաղթողները

Հայաստանի շախմատիստի կենտրոնական տանն ավարտվեցին հանրապետության պատանեկան առաջնությունները (10-ից 18 տ.): Չեմպիոններն ու չեմպիոնուհիները որոշվեցին տարիքային հինգ խմբերում: Առաջնությունը նաեւ ընտրական բնույթ ուներ. յուրաքանչյուր տարիքային խմբի չեմպիոնն ու փոխչեմպիոնը իրավունք էին ստանում մասնակցելու աշնանը կայանալիք աշխարհի կամ Եվրոպայի պատանեկան առաջնություններին (ընտրելու առաջնահերթության իրավունքը պատկանում է չեմպիոնին):



Առաջնություններն անցկացվեցին շվեյցարական մրցակարգով, 9 տուրով: Ուրախալի է, որ մրցաշարերը, որոնցում հանդես եկան երկրի բոլոր մարզերի շուրջ 200 շախմատիստ-շախմատիստուհիներ, ընթացան շատ հետաքրքիր ու լարված պայքարում: Հնգական տարիքային խմբերի չեմպիոնները որոշվեցին տղաների 4 եւ աղջիկների 2 մրցաշարերում: Նշենք բոլոր տարիքային խմբերի հաղթողներին, երկրորդ մրցանակակիրներին եւ նրանց ցույց տված արդյունքները: Տղաներ. 10 տարեկաններ-1. Գեւորգ Ալավերդյան (Հրազդան)՝ 7 միավոր, 2. Սարգիս Մանուկյան (Երեւան)՝ 6,5, 12 տ.-1. Տիգրան Մամիկոնյան (Երեւան)՝ 8,5, 2. Արսեն Նաղդալյան (Երեւան)՝ 7, 14 տ.-1. Հայկ Վարդանյան (Հրազդան)՝ 7, 2. Վարդան Մովսիսյան (Սիսիան)՝ 7, 16 տ.-1. Բենիկ Գալստյան (Երեւան)՝ 7,5, 2. Տիգրան Դարամյան (Երեւան)՝ 6,5, 18 տ.-1. Տիգրան Մանուկյան (Երեւան)՝ 6,5, 2. Գոռ Վիրաբյան (Նոր Հաճն)՝ 6,5 միավոր, աղջիկներ. 10 տ.-1. Նունե Դարբինյան (Երեւան)՝ 8, 2. Շուշան Սարգսյան (Վայոց Ձոր)՝ 4,5, 12 տ.-1. Տաթեւիկ Աբրահամյան (Երեւան)՝ 8, 2. Թերեզա Սարգսյան (Երեւան)՝ 6,5, 14 տ.-1. Սիրանուշ Անդրեասյան (Երեւան)՝ 6, 2. Լիանա Աղաբեկյան (Վանաձոր)՝ 5, 16 տ.-1. Անի Ավանեսյան (Կապան)՝ 7,5, 2. Ալլա Սահակյան (Արմավիր)՝ 6,5, 18 տ.-1. Նարինե Գասպարյան (Վանաձոր)՝ 8, 2. Լիլիթ Գալոյան (Երեւան)՝ 6,5 միավոր:

Ահա այս 20 պատանիներն ու աղջիկները կդառնան մեր հանրապետության մարզական պատիվն աշխարհի եւ Եվրոպայի 10-18 տարեկան շախմատիստների առաջնություններում: Դրանցից առաջինը կանցկացվի հոկտեմբերի վերջին-նոյեմբերի սկզբին, Իսպանիայի Օրոսեզա դել Մար քաղաքում, երկրորդը՝ սեպտեմբերի առաջին կեսին, Հունաստանի Կալիթեա քաղաքում: Ընթերցողներին հիշեցնենք, որ աշխարհի մինչեւ 20 տարեկան շախմատիստների ու շախմատիստուհիների առաջնությունները կրկին կանցկացվեն Երեւանում: Հայտնի են նաեւ անցկացման ժամկետները՝ սեպտեմբերի 18-հոկտեմբերի 2:

Հանրապետական առաջնության ավարտից հետո խնդրեցինք կարծիք հայտնել Հայաստանի շախմատային ֆեդերացիայի մանկապատանեկան հանձնաժողովի նախագահ, ՀՀ վաստակավոր մարզիչ Վրեժ Օդյանին: «Այս առաջնությունը մեկ անգամ եւս հաստատեց, որ շախմատը հանրապետությունում բուռն վերելք է ապրում, ասաց պրն Օդյանը: Տեսեք, թե յուրաքանչյուր տարիքային խմբում քանի հոգի էր մրցակցության մեջ մտել: Ուրախությամբ պետք է նշեմ, որ մարզածեւով պարապում են մեր բոլոր մարզերում: Եվ՝ լավ են պարապում: Ասածս հաստատում են նրանց ցույց տված արդյունքները. մարզերի պատանիներն ու աղջիկները հավասար պայքար մղեցին շախմատային կենտրոնների ներկայացուցիչների հետ: Ուշադրություն դարձրեք՝ մրցանակակիրների համարյա կեսը նրանք են: Ավելացնեմ նաեւ, որ գնալով բարձրանում է մեր պատանի շախմատիստների խաղամակարդակը, ինչը ապագայի հույսեր է ներշնչում»:

ԹԵՆԻՍ

Հրաշալի յոթնյակները

Հրապարակվել են պրոֆեսիոնալ թենիսիստների եւ թենիսիստուհիների հերթական ցուցակները: Նախորդի համեմատությամբ դրանք էական փոփոխություններ չեն կրել:

Ներկայացնում ենք դասակարգման ցուցակների առաջին յոթնյակները.

Կանայք

1. Լինդսեյ Դեւենպորտ (ԱՄՆ)՝ 6073, 2. Մարտինա Հինգիս (Շվեյցարիա)՝ 6046, 3. Վենուս Ուիլյամս (ԱՄՆ)՝ 3279, 4. Մերի Պիրս (Ֆրանսիա)՝ 2645, 5. Նատալի Տոզյա (Ֆրանսիա)՝ 2549, 6. Սերենա Ուիլյամս (ԱՄՆ)՝ 2489, 7. Մոնիկա Սելես (ԱՄՆ)՝ 2202 միավոր:

Տղամարդիկ

1. Անդրե Ագասի (ԱՄՆ)՝ 252, 2. Եվգենի Կաֆելնիկով (Ռուսաստան)՝ 224, 3. Փիթ Սամփրաս (ԱՄՆ)՝ 218, 4. Մագնուս Նորման (Շվեդիա)՝ 188, 5. Լլեյթոն Հյուիթ (Ավստրալիա)՝ 187, 6. Թիմ Հենման (Անգլիա)՝ 140, 7. Նիկոլաս Կիֆեր (Գերմանիա)՝ 137 միավոր:

Այս ցուցակում Հայաստանի ներկայացուցիչ Սարգիս Սարգսյանը 71-րդ տեղում է. նա 24 միավոր ունի:

Մրցաշարից մրցաշար

ATP երեք խոշոր մրցաշարեր անցկացվեցին Ատլանտայում (ԱՄՆ), Կասաբլանկայում (Մարոկկո) եւ Էստորիլում (Պորտուգալիա):

Ատլանտայի մրցաշարի հաղթողի կոչումը վիճարկեցին ավստրալացի թենիսիստներ Էնդրու Իլիեն եւ Ջեյսոն Ստոլտենբերգը: Ավելի ուժեղ գտնվեց Իլիեն, որն էլ նվաճեց գլխավոր մրցանակը: Ատլանտայում հանդես էր գալիս աշխարհի ուժեղագույն թենիսիստ Անդրե Ագասին: Սակայն նա մրցաշարը կիսաս թողեց վնասվածքի պատճառով: Մրցաշարին շուտ հրաժեշտ տվեց նաեւ մեր Սարգիս Սարգսյանը: Պարտվելով երկրորդ շրջանում՝ նա դուրս մնաց պայքարից:



ՌՈՅԵՐ-ՍՊՈՐՏՍՊՈՐԵՍ

Կասաբլանկայի մրցաշարի հաղթող դարձավ Ֆեռնանդո Վիսենտեն (Իսպանիա), որը եզրափակիչում 6-4, 4-6, 7-6 հաշվով պարտության մատնեց Սեբաստիան Գրոսժանին (Ֆրանսիա):

Էստորիլում հաղթողը նույնպես իսպանացի էր՝ Կառլոս Մոյան: Վճռական խաղում նա 6-3, 6-2 հաշվով առավելության հասավ իր հայրենակից Ֆրանսիսկո Կլավետի նկատմամբ:

Կանայք VTA-տուրի մրցաշար անցկացրին Ֆլորիդայի Ամելիա Այլենդում: Այստեղ գլխավոր մրցանակը նվաճեց Մոնիկա Սելեշը (ԱՄՆ), որը եզրափակիչում հաղթեց Կոնչիտա Մարտինեսին (Իսպանիա)՝ 6-3, 6-4:

Այժմ «Մասթերս» շարքի խոշոր մրցաշար է անցկացվում Մոնտե Կառլոյում: Համապատասխան է նաեւ մրցանակային հիմնադրամը՝ շուրջ 2,5 մլն դոլար: Մոնակոյում հանդես չի գալիս Ագասին, եւ Կաֆելնիկովը, հաջողության դեպքում, կարող է վերստին գլխավորել ուժեղագույնների ցուցակը:

Ի դեպ, տեղացող անձրեւի պատճառով Կաֆելնիկովի եւ զուգախաղերում նրա վաղեմի խաղընկեր չեխ Դանիել Վացեկի հանդիպումը չկայացավ: Միակ ծածկած խաղադաշտում տեղի ունեցած հանդիպումներն անակնկալ ավարտ ունեցան. Ուեյն Ֆերեյրան (ՀԱՀ) հաղթեց Մարկ Ֆիլիպուսիսին (Ավստրալիա)՝ 6-4, 7-5, Սլավա Դոսեդելը (Չեխիա)՝ Գրեգ Ռուսեդսկուն (Անգլիա)՝ 6-4, 6-7, 6-1:

Երկրորդ շրջան է մտել Սարգսյանը: Մենակարգային խաղում նա հանդիպել էր մարոկկոցի Յունես էլ Այնաուիի հետ: Վերջինս երկրորդ խաղափուլում հրաժարվեց պայքարից՝ վնասվածքի պատճառով:

Տղամարդու եւ կնոջ մրցավեճը

Այնքան էլ հազվադեպ չեն շախմատի խաղաստակի առջեւ դեմ-հանդիման նստում տղամարդիկ ու կանայք: Իսկ վերջին շրջանում ավելի հաճախակի են դարձել մրցախաղային հանդիպումները:

Այդպիսի մի մրցախաղ օրերս ավարտվեց Չինաստանի Գուանչժոու քաղաքում, որտեղ պայքարի մեջ էին մտել աշխարհի չեմպիոնուհի Սե Չժունը եւ աշխարհի նախկին չեմպիոն Անատոլի Կարպովը: Այս հանդիպումը «տղամարդու եւ կնոջ մրցավեճ» էին անվանել:

Չին շախմատիստուհին մրցախաղից առաջ հայտարարել էր, որ մանկական տարիներից Կարպովն իր կուռքն է եղել, եւ նրա հետ մրցախաղ անցկացնելն էր վաղեմի երազանքն է: Նա նաեւ ավելացրել էր, որ կաշխատի հաղթել նախկին չեմպիոնին:

Սե Չժունի հույսերը չիրականացան: Ինչքան էլ որ 49-ամյա Կարպովի համար դժվարացել է աշխարհի առաջատար շախմատիստների հետ մրցելը, այդուհանդերձ, նրա մեծ փորձը, ուժը բավարար եղան աշխարհի չեմպիոնուհուն հաղթելու համար: Ըստ մրցակարգի, Կարպովն ու Սե Չժունը 4 դասական եւ 2 արագ պարտիա խաղացին: Դասական ժամանակակարգով պարտիաներից մեկը (3-րդը) Կարպովը շահեց, իսկ մյուս 3-ը ոչ-ոքի ավարտեց: Արագ շախմատում եւս աշխարհի նախկին չեմպիոնը գերազանցեց մրցակցուհուն. նա շահեց մեկ պարտիա, իսկ մյուսը ոչ-ոքի ավարտեց:

Այսպիսով, Անատոլի Կարպովը մրցախաղում հաղթեց 4-2 հաշվով:

ԲԿՄԱ-ի հաղթանակը

ՌՈՅԵՐ-ՍՊՈՐՏՍՊՈՐԵՍ

Ավարտվեց Հյուսիսեվրոպական լիգայի առաջին խաղարկությունը: Այս մրցումներում հանդես էին գալիս բալթյան եւ սկանդինավյան երկրների, Ռուսաստանի, Ուկրաինայի թիմերը:

Լիգայի խաղարկության եզրափակիչը՝ չորս թիմերի մրցաշարը, անցկացվեց Վիլնյուսում: Կիսաեզրափակիչներից մեկում ԲԿՄԱ-ն (Մոսկվա, Ռուսաստան) հաղթեց «Կիեւին» (Ուկրաինա), լիտվական երկու թիմերի՝ «Ժալգիրիսի» (Կաունաս) եւ «Լիետուվաս-Ռիտասի» (Վիլնյուս) հանդիպումը հաջողություն բերեց վերջինիս:

Եզրափակիչում ԲԿՄԱ-ն 95-77 հաշվով հաղթեց «Լիետուվաս-Ռիտասին» եւ նվաճեց Հյուսիսեվրոպական լիգայի առաջին չեմպիոնի կոչումը: Երրորդ տեղի համար պայքարում «Ժալգիրիսը» 110-88 հաշվով պարտության մատնեց «Կիեւին»:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Բակլա: 4. Եհովա: 9. Տոպազ: 10. Յասոն: 11. Անդունդ: 13. Ալմաստ: 14. Գեսնուդի: 16. Աղցան: 18. Գոբելեն: 23. Դեբյուսի: 25. Երաժիշտ: 27. Նիգերիա: 28. Ուկրաինա: 29. Վանանդ: 30. Գիգանտ:

Հորիզոնական

2. Ասոիդ: 3. Լոգունգ: 5. Հայելի: 6. Վեստա: 7. Ատլաս: 8. Սնոտի: 12. Դեդալոս: 13. Աղանդեր: 15. Նեցկե: 17. Օդանավ: 18. Գուդրոն: 19. Բիծաք: 20. Լեզու: 21. Նաիրցի: 22. Ատլանտ: 24. Բագին: 26. Իգիդա:



Ուղղահայաց

1. Վերդիի օպերան: 2. Լ. Շանթի դրամա՝ «Օշին ...»: 3. Ակվարիումային ձուկ: 4. Մատաղահասակ: 5. Վատ արարքներ գործող անձ: 6. Խորհրդային ֆիզիկոս: 9. Բույսերում կուտակվող ածխաջուր: 10. «Վոսխոդ» տիեզերանավի օդաչու, բժիշկ: 12. Ժողովրդական բանաստեղծ-երգահան: 17. Սունդուկյանի վեպերներ սարքող հերոսուհին: 18. Ռուս թատերագետ: 19. Հոդատաղ: 21. Դելիբի բալետը: 25. Անդորր, ոչնչով չխռովվող երջանիկ կյանք: 26. Ծառայողական շուն՝ ... տինչեր: 28. Սփյուռքահայ գեղանկարիչ: 30. Կուտրինի վեպը: 32. Քաղաք Ֆրանսիայում: 33. Խոսքի մաս: 34. Հեռուստատեսային մշակութային ծրագիր: 39. Նորվեգացի կոմպոզիտոր: 41. Բարոյախոսական, երգիծական բովանդակությամբ արձակ փոքրիկ երկ:

Հորիզոնական

7. Միջնադարում XI-XIII դդ. Ֆրանսիայի հարավում տարածված սերը՝ ջնարակ տիկնոջը, ռազմական սխրանքները գովերգող երգիչ-բանաստեղծի անվանումը: 8. Նստվածքային ծագումով կավ: 9. Հերոսուհի «Եվգենի Օնեգին» չափածո վեպում: 11. Գանայի մայրաքաղաքը: 13. Ամերիկյան իդեալիստ փիլիսոփա, տրամաբան, մաթեմատիկոս: 14. Վիվերների ընտանիքի գիշատիչ կաթնասուն: 15. Ատլինի անուններից: 16. Քաղաք Կանադայում: 20. Գոական ժանր: 22. Մեծ իմաստուն: 23. «Դոն Կիխոտ» բալետի հեղինակը: 24. «Մեխանիկական դաշնամուր», «Վրեժ» կինոնկարների ռեժիսորը եւ սցենարիստը: 27. Բյուզանդիայի կայսրուհի: 29. Հայ բանաստեղծ, դրամատուրգ: 31. Սպենդիարյանի բալետը: 35. Բույսերի վերարտադրման, տարածման կարեւորագույն օրգան: 36. Գ. Հախինյանի օպերան: 37. Լեռնագագաթ Հայկական լեռնաշխարհում, Ծաղկանց լեռներում: 38. Քաղաք Հնդկաստանում: 40. Ֆիզիկական պակասություն: 42. Կաթոլիկական եկեղեցու ամենաբարձր հոգեւոր տիտղոսը՝ պապից հետո: 43. Ֆրանսահայ գեղանկարիչ:

Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԵՐԵՎԱՆ

Բենզինի շուկայում գների նվազման միտում

ԵՐԵՎԱՆ, 18 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թեեւ բենզինի միջազգային շուկայում գները դեռեւս չեն կայունացել, սակայն Հայաստանում արձանագրվում է գների նվազման միտում: Բենզին ներկրող «Ֆլեհ» ՍՊԸ-ի նախագահ Բարսեղ Բեգլարյանը հայտնեց, որ առաջիկա 10 օրերի ընթացքում 20 լ բենզինի գինը կիջնի 5000 դրամ, իսկ արդեն մեկ-երկու ամսվա ընթացքում՝ 4700 դրամ: Միաժամանակ ցրն: Բեգլարյանը նշեց, որ եթե կառավարությունը մի փոքր հարկային զիջումների գնա, ապա 20 լիտրի գինը կարող է հասնել մինչեւ 4400 դրամի:

Նշենք, որ 1999 թվականի օգոստոսի մեկից մեկ տոննայի դիմաց 120 դոլար ակցիզային հարկը բարձրացավ 205 դոլար, որի արդյունքում նախատեսված ամսական 20 հազար տոննայի ներկրումն ու իրացումն այդպես էլ չիրականացավ: Իսկ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում կանխատեսվող 45-50 հազար տոննա բենզինի փոխարեն ներկրվել է ընդամենը 25-26 հազար տոննա:

Հունիսի 1-ից Հայաստանում կսկսի գործել բենզինի նոր ստանդարտ, որը ներդաշնակեցված է EN 228, 1995 ստանդարտի հետ: Բարսեղ Բեգլարյանը կարեւորելով նոր ստանդարտի ներդրումը նշեց, որ անհրաժեշտ է ունենալ նոր ստանդարտներին համապատասխան տեխնիկական միջոցներ, որոնք հնարավորություն կտան ճշգրիտ ստուգել բենզինի որակական հատկանիշները: Այսուհետեւ ոչ էթիլացված բենզինի համար Հայաստանում կլինեն 4 մակնիշներ. Նորմալ-80, Ռեգուլյար-91, Պրեմիում-95, Սուպեր-98:

ՀԱՄԱՌՈՏ

Գերիների եւ անհետ կորածների հարցերով հանձնաժողով է ստեղծվում

Ելնելով մարտական գործողությունների կամ զինվորական ծառայության ժամանակ գերի ընկած եւ անհայտ կորած զինծառայողների, պատանդ վերցրված ու անհայտ կորած խաղաղաշինների գտնվելու վայրը պարզելու եւ նրանց վերադարձնելու աշխատանքները համակարգելու անհրաժեշտությունից, նախագահ Ռոբերտ Քոչարյանն ապրիլի 18-ին հրամանագիր է ստորագրել գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողով ստեղծելու մասին: Ինչպես հաղորդում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը, հանձնաժողովը կգլխավորի ՀՀ պաշտպանության նախարարը:

Արկադի Ղուկասյանը երրորդ անգամ վիրահատվեց

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 18 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 18-ին կատարվել է ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հերթական՝ երրորդ վիրահատությունը, որի ընթացքում հեռացվել է հրազենային վնասվածքի հետեւանքով առաջացած ձախ ոտքի ոսկորի արատը: Վիրահատող բժիշկ Վալագան Այվազյանի վկայությամբ, գործողությունը ընթացել է առանց բարդությունների, ինչը թույլ է տալիս բժիշկներին այսօրվանից սկսել ապաքինման երկրորդ փուլը:

Մախանենգները չեն հատում վտանգավոր «սահմանը»

ԵՐԵՎԱՆ, 18 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: 1999 թ. եւ 2000 թ. առաջին ամիսներին Տավուշի մարզի առաջին աստյանի դատարանում քննվել են մախանենգության 21 հայց: Կայացած դատավճիռներում մախանենգները տուգանվել են ավելի քան 15 մլն դրամի չափով: Ուշագրավ է, որ շատ դեպքերում մախանենգ ապրանքի արժեքը մոտենում է 2 մլն դրամի, բայց չի հատում այդ սահմանը: Նշենք, որ մախանենգ ապրանքի արժեքը 2 մլն դրամից գերազանցելու դեպքում գործող օրենսդրությունը նախատեսում է քրեական պատիժ:

Որոտան-Արփա թունելում շինարարական աշխատանքները կվերսկսվեն ապրիլի վերջին

ԵՐԵՎԱՆ, 18 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Այս տարվա փետրվարին «Որոտան- Արփա» թունելի 2-րդ թունելախորշում տեղի ունեցած ապարային ժայթքման հետեւանքով փակվել էր թունելախորշի 85-90 մետր երկարությամբ հատված, որից 70 մետրը արդեն մաքրվել է: Թունելախորշը ամբողջությամբ մաքրելու եւ թունելում անվտանգության ապահովման համար Մոսկվայից Հայաստան հրավիրված մասնագետները հայ շինարարներին խորհուրդ էին տվել մեծադակաս վահանակ գնել: Սակայն, ինչպես հայտնեց թունելում շինարարական աշխատանքներ կատարող «Արփա-Սեւան» ԲԲԸ նախագահ Հակոբ Հակոբյանը, վահանակի գնման համար միջոցների բացակայության, ինչպես նաեւ թունելի մեկ գծամետր տարածքի էապես բարձրացող ինքնարժեքի պատճառով հայ մասնագետները հրաժարվել են այդ առաջարկից: Փոխարենը, ըստ նրա, մշակվել է փլվածքի էտիկետներոնի շրջանցման նախագիծ:

Հակոբյանի խոսքերով, թունելի շինարարության աշխատանքները կսկսվեն ապրիլի վերջին՝ շինարարների աշխատավարձի պարտքի մարումից եւ բյուջեով նախատեսված 2 մլրդ 146,6 մլն դրամից որոշակի մաս ստանալուց հետո:

«ԿԼՈՐ ՍԵՂԱՆ» ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻՆ

Կազմակերպությամբ ԱԶԳ օրաթերթի, այսօր, ապրիլի 19-ին, ժամը 15⁰⁰-ին, Թեֆեյան կենտրոնում տեղի կունենա

«ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»

նվիրված Հայաստանի արդյունաբերության զարգացման առաջնահերթություններին ու հեռանկարներին, մասնակցությամբ արդյունաբերական մտավորականության եւ կառավարության համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների:

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք ծրագիր

Բանախոս՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ

Տիգրան Թորոսյան

Թեման՝ «ՀՀ ներքաղաքական իրավիճակի վերլուծություն»

Հինգշաբթի, ապրիլի 20-ին, ժամը 18:30-ին, Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում:

Դասախոսությունը կընթանա հայերենով, անգլերեն համընթաց թարգմանությամբ:

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

ՄԻԺԻ-ի տնօրենների խորհուրդը եւ աշխատակազմն իրենց խորին ցավակցությունն են հայտնում Մելինե Թովմասյանին՝ ՄԻԺԻ-ի գործադիր տնօրենին եւ Սարգսյան ընտանիքին իրենց սիրելի տատիկի՝ **ՀԱՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ** վաղաժամ մահվան առիթով: Ուժ եւ կորով ենք ցանկանում սիրելի Մելինեին եւ իր գերդաստանին:

AED
Academy for Educational Development

USAID
USAID

CHEMONICS INTERNATIONAL INC.

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Կրթության զարգացման ակադեմիան (AED) եւ Քեմոնիքս ինթերնեշնլը

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ AED-ի «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը տեղի կունենա ապրիլի 21-ին, ժամը 11:30-ին, Թեֆեյան կենտրոնում (Խանջյան 50):

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ պետական գույքի կառավարման նախարարի տեղակալ

Ասոս Մարկոսյանը,

IBTCI-ի հայաստանյան գրասենյակի ավագ խորհրդատու

Դեյվիդ Սպիրան:

Թեման՝ «Մասնավորեցման գործընթացի ներկա իրավիճակի վերլուծությունը եւ հետագա քայլերը»

Հանդիպումից հետո՝ ժամը 13:30-ին, տեղի կունենա տնտեսական եւ իրավական թեմաներով գրող լրագրողների համար Քեմոնիքս ինթերնեշնլի կազմակերպած սեմինարների շարքի հերթական թեմայի ներկայացումը:

«Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռներեցների գրանցումը (գործող օրենքը եւ ԱԺ-ին առաջարկվող փոփոխությունները)»

թեմայով հանդես կգան Միջազգային իրավական խորհրդատվություն ՍՊԸ-ի գործընկեր

Էդիթ Խաչատուրյանը,

ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի վարչության պետ

Տիգրան Մուկուչյանը:

ՀԵՌՈՒՏԱՑՐԱԳՐԵՐ

19 ապրիլ

ԱՐ

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.10 Հայորդաց տներ
10.20 Մամուլի կրոյակ
10.30 Համայնապատկեր
11.00 Գ/Ֆ «Գործողություն «Փիղ»
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
16.00 Մուլտֆիլմ «Քայլուշայի եւ Կոմոյուշայի մասին»
16.20 «Ասպետ» վիճակախաղ
17.00 Հայլուր
17.20 Նոր սերունդ
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Պրեմիերա Թեհրանում»
19.55 Ռուբիկոն
20.25 Արակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Ազգային ժողովի նիստում. հայտարարություններ. հարցեր կառավարությանը (Արբանյակային հեռարձակմամբ)
21.40 Գ/Ֆ «Կտոր մը երկինք»
23.05 Փաստագրական կինոնկար «Երգ երգոց»)
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.00 «Բարի լույս. Հայաստան»
10.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիանները», սերիալ «Սոլթի»
19.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
20.00 Լուրեր
20.35 «Շոկ»
20.55 Մորիս Բեժար. Գուստավ Մալեր
21.20 Օրը
22.25 «1-02» լուսու
22.30 Ամողջ լուսը
23.35 Գ/Ֆ «Խորք մայրը»

Գ

9.00 Տոմար
10.30 Ասպարեզ (կրկնություն)
19.05 Շղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Գիսաստղեր
20.30 Կամ-կամ
21.10 Դիվաղաղար
22.05 Գ/Ֆ «Մենք հրեշակներ ենք»
0.35 Ակնարք
0.40 Սուք սենյակ
1.00 Գ/Ֆ «Շախտարդների դարահանդեսը» (ավարտին Սուրհանդակ)

Գ1

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.40 Հրաշալի ընկերախումբ
17.00 Ցունամիների կանչը
17.25 ...Սինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.30 Դիմակներ շոու
20.00 Մարդը եւ օրենքը
20.45 Սերիալ «Հուսեր Շեղոք Հոլմսի մասին»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Լողավազան» (դերերում Ա. Դելոն, Ռ. Շնայդեր, Ֆրանսիա, 1969 թ.)

ՌՏՎ

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.30 Բարի լույս. Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
9.20 Հեռուստատեսային ՀՍՍ. հերթապահ բաժանումներ
10.40 «Արենա-պորտս»
11.20 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստատեսային ՀՍՍ
13.30 Իմ XX դարը
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Կանանց խաղաթուղթ»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.45 Իմ ընտանիքը
17.40 Մուլտֆիլմ
18.30 Աշխարհ
18.55 «Կոր տարեթիվ». Վլադիմիր Վասիլեւ
19.25 Թարոն+TV Միխայիլ Լեւիտինի հետ
20.25 Ինդի Ռեգ ոճիրներ
21.45 Սերիալ «Վայրի հրեշակը»
22.40 Սերիալ «Կնճռոտուտը»
00.30 Տղամարդը եւ կինը
01.20 Կինոյի ժամ. Ջեֆ Նիկոլսոնը եւ Մայք Քեյնը «Արյուն եւ գինի» ֆիլմում (ԱՄՆ)
03.00 Հեռուստատեսային ՀՍՍ. հերթապահ բաժանումներ

@rmineo Global Telecommunications

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ուսուցում՝ ԻՆՏԵՐՆԵՏ դպրոցում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուէր 1244 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 18. 04. 2000 Գինը՝ 100 դրամ